

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2015/2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ – 2016



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	5
Կրթական գործունեություն.....	9
Գիտահետազոտական գործունեություն .....	33
Գիտական գրադարան .....	40
Հրատարակչական գործունեություն.....	43
Միջազգային համագործակցություն .....	48
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր.....	52
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ .....	62
Մոցիակական քաղաքականություն.....	75
Տնտեսական գործունեություն .....	78
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ .....	80
Հավելված .....	88



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015/2016 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում ձեռնարկվել և իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ և ծրագրեր, որոնք կոչված էին ապահովելու Համալսարանի գործունեության արդյունավետությունը, խթանելու նրա առաջընթացը և մրցունակությունը միջազգային գիտակրթական ասպարեզում: Մշակվել և հաստատվել են ԵՊՀ զարգացման նոր՝ 2016-2020 թթ. ռազմավարական ծրագիրը, այդ ծրագրի իրականացման ժամանակացույց-սլանը, ամփոփվել և քննարկվել են ԵՊՀ գործունեության ներքին ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները (SWOT), կազմվել է ԵՊՀ ռազմավարական ծրագրի բյուջեի նախագիծը:

Իրականացվել են ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման և մեթոդների նորացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, դասավանդման որակի բարձրացման, կրթության բովանդակության հարստացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման, ուսուցման տեխնոլոգիական հենքի նորացման և զարգացման և այլ ուղղություններով աշխատանքներ:

Արդյունավետ է եղել ԵՊՀ գիտահետազոտական գործունեությունը. իրականացվել են գիտական տարբեր նախագծեր, համալսարանականներն ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ դրամաշնորհային ծրագրերի, ընդլայնվել է ուսանողների ու ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում: Համալսարանի ֆակուլտետներում, գիտահետազոտական ինստիտուտներում և կենտրոններում կատարվել են արժեքավոր ուսումնասիրություններ: Կազմակերպվել և անցկացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտագործնական սեմինարներ ու քննարկումներ տարբեր բնագավառների վերաբերող թեմաներով:

Շարունակվել է ԵՊՀ հրատարակչական գործունեությունը, անխախտ պարբերականությամբ լույս են տեսել գիտական հանդեսները:

Ընդլայնվել է ԵՊՀ գործունեությունը միջազգային համագործակցության բնագավառում: Արտերկրի բազմաթիվ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ

կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր, վերակնքվել առկաները: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակություն, փոխայցելություններ և այլն:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են եղել համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Միջոցառումներ են ձեռնարկվել մասնավորապես առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու, ինչպես նաև համալսարանականների հանգստի կազմակերպման ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: ԵՊՀ տարբեր մասնաշենքերում, ուսումնասիրտադրական և հանգստի բազաներում կատարվել են բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ, ձեռնարկվել են միջոցառումներ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ, բարելավվել են ներքին տեղեկատվական ցանցի աշխատանքները, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ և այլն:

Ակտիվ են գործել ուսանողական կառույցները, որոնք ընդգրկվել են ինչպես բուհի կառավարման գործընթացում, այնպես էլ համալսարանական կյանքի բոլոր բնագավառներում ձեռնարկված աշխատանքներում:

Արդյունավետ գործունեություն է ծավալել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

\* \* \*

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել մեր պետության և ժողովրդի համար կարևորագույն իրադարձություններ, որոնց, բնականաբար, անմասն չէր կարող լինել Մայր բուհը:

2016 թ. լրացավ Հայաստանի Հանրապետության հիմնադրման 25-ամյակը: Այս կարևորագույն տարեդարձի առիթով ռեկտորի գլխավորությամբ ԵՊՀ-ում կազմավորվել է հորեյանական միջոցառումները համակարգող հանձնաժողով, որը քննարկել և հաստատել է համալսարանական տոնական միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, համակարգել իրականացվող ծրագրերն ու միջոցառումները:

Համաձայն վերոնշյալ ծրագրի՝ իրականացվել են 5 տասնյակից ավելի միջոցառումներ՝ գիտական նստաշրջաններ, միջազգային, հանրապետական, համաբուհական գիտաժողովներ, դասախոսություններ, հրատարակություններ, հանդիպում-

քննարկումներ, սեմինարներ, ուսանողական ինտելեկտուալ ու մարզական մրցույթներ, մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ, այցեր, արշավներ և այլն: Հոբելյանական միջոցառումների շրջանակում Մայր բուհ են այցելել ՀՀ անվանի պետական, հասարակական, քաղաքական գործիչներ, ովքեր հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ:

ՀՀ անկախության 25-ամյակի ծրագրի շրջանակում կազմակերպվել են նաև մի շարք միջոցառումներ՝ նվիրված ԵՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին: Արցախում անցկացվող ավանդական ծառատունկն այս տարի նվիրված էր Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծման քառորդարյա հոբելյանին: Համալսարանականները Բերձորում հիմնեցին ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված պուրակ:

2016-ի տարեսկզբին ԵՊՀ պորտալում բացվել է «ՀՀ անկախություն 25» խորագրով հատուկ կայքէջ, որտեղ տեղադրված է տոնական միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, ներկայացված են կարևոր հոբելյանական միջոցառումները: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված համալսարանական միջոցառումները լուսաբանվել են ԵՊՀ պաշտոնական կայքում, «Երևանի համալսարան» ամսաթերթում, ինչպես նաև՝ հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով:

Երևանի պետական համալսարանը ստեղծման օրվանից ի վեր եղել է մեր ժողովրդի շահերի յուրատեսակ արտահայտիչը, նրա հետ է եղել ազգային բոլոր խնդիրների վերհանման ու վճռման պահերին: Այդպես էր նաև 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի դեպքում: Այդ օրերին ԵՊՀ-ն մեծ պատրաստակամությամբ թե՛ բարոյապես, թե՛ նյութապես աջակից եղավ հայրենիքի սահմանները անառիկ պահող հայ զինվորին: Սա իր տեսակի մեջ յուրօրինակ ու ինքնաբուխ նախաձեռնություն էր, որով անուղղակիորեն դրսևորվում է նաև ԵՊՀ-ի ներգրավումը համազգային ծրագրերում (կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը): ԵՊՀ ռեկտորատի, ուսանողական կառույցների և արհեստակցական կազմակերպության ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել է կամավորագրման գործընթաց, ինչպես նաև առաջին անհրաժեշտության պարագաների և դրամական միջոցների հավաք:

Ապրիլյան պատերազմի օրերին և դրանից հետո ԵՊՀ-ի կողմից մեծ ծավալի ֆինանսական և նյութական աջակցություն է տրամադրվել Արցախին: Մասնավորապես՝ համալսարանականների կողմից ցուցաբերվել է շուրջ 5 մլն դրամի դրամական և նյութական օգնություն, իսկ ԵՊՀ-ի կողմից նվիրաբերվել է շուրջ 30 մլն դրամ, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն, առաջին անհրաժեշտության պարագաներ, սնունդ, վրաններ և այլն: 2016 թ. ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով ԵՊՀ-ն 2016 թ. հունիսի 1-ից իրականացնում է զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն տրամադրելու ծրագիր: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 20.000 ՀՀ դրամ: Այս դրամական օգնությունը տարեկան կազմում է շուրջ 25 մլն դրամ:

Առանձնահատուկ կցանկանայինք շեշտադրել ՀՀ զինված ուժեր գորակոչված ԵՊՀ ուսանողներին, ովքեր իրենց արիությամբ և անձնագոհությամբ աչքի ընկան մարտի դաշտում և արժանացան ՀՀ և ԼՂՀ բարձր պետական պարգևների: Նրանցից շատերը սեպտեմբերին վերադարձան Համալսարան, և Համալսարանի կողմից իրականացվող քաղաքականության առաջնային խնդիրն է նրանց կերպարն ու կենսակերպը ուսանողության շրջանում քարոզելը: Այդ առումով հատկանշական է, որ 2016 թ. սեպտեմբերին ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողության ընթացքում այդ ուսանողները հանդիսավոր կերպով ԵՊՀ մասնաշենքի առջև ՀՀ օրհներգի հնչյունների ներքո բարձրացրին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:

\* \* \*

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Երևանի պետական համալսարանի 2015/2016 ուսումնական տարվա գործունեությունը՝ ըստ ոլորտների:



## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015/2016 ուսումնական տարում ԵՊՀ-ում արդյունավետ կրթական գործունեություն ապահովելու նպատակով իրականացվել են մի շարք գործընթացներ: Մասնավորապես՝ շարունակվել են աշխատանքները կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացի կազմակերպման և որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, դասավանդման որակի բարձրացման, ընդունելության նախապատրաստման և կազմակերպման, դասախոսների մասնագիտական վերապատրաստման, բուհի գործունեության պլանավորման և կառավարման և մի շարք այլ ուղղություններով:

### 1. Որակի ապահովում

Այս ասպարեզում անցած ուստարում Համալսարանում իրականացվել են ծավալուն աշխատանքներ:

Շարունակվել և ավարտին են հասցվել դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման առցանց էլեկտրոնային համակարգի ստեղծման ուղղությամբ գործընթացները: Նոր փուլ են մտել կրթական ծրագրերի մշակման և լրամշակման, ծրագրերի փաստաթղթային փաթեթների ստուգման և մասնագիտական եզրակացության տրամադրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները, որոնք տեղադրվել են ԵՊՀ կայքէջում:

Տպագրվել են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածները առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված մի շարք գործողություններ, Ժամանակացույց-պլանի համաձայն, մեկնարկվել են հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակում: Մասնավորապես՝ ՌԾ-ի «Որակյալ կրթությո-

յուն» նպատակի 1.1. խնդրի իրականացման համար ռեկտորի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի գլխավորությամբ: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ընթացքում քննարկվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերի վերանայման հարցեր: Արդյունքում՝ վերանայվել, լրամշակվել և ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. հուլիսի 7-ի նիստի թիվ 8/2 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթուղթը: Մշակվել է նաև «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ»-ի նախագիծը, որն ուղարկվել է բոլոր ֆակուլտետներ և կրթական կենտրոններ՝ քննարկման և առաջարկություններ համար:

Սկսվել և ընթացքի մեջ են «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթի լրամշակման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները որակի ապահովման և հավատարմագրման վեբ-հենքով վիրտուալ շտեմարանի ստեղծման ուղղությամբ: Այս համակարգի նպատակն է ապահովել ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմները (ուսանողական հարցումներ և այլն), ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների ու դրանց արդյունքների վերաբերյալ իրազեկել ԵՊՀ և լայն հանրությանը:

Կրթության որակի շարունակական բարելավմանը մեծապես նպաստում են դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները, ինչպես նաև Համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Հաշվետու ուստարում հարցումներն իրականացվել են ամբողջությամբ փոխված կամ լրամշակված հարցաթերթիկներով՝ ըստ համապատասխան կանոնակարգերի, որոնք նույնպես լրամշակվել են: Առաջին անգամ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների շրջանում հարցումներն իրականացվել են առցանց եղանակով: Աշխատանքներ են տարվել ինչպես առկա ուսուցման համակարգի ուսանողների շրջանում ուսանողական հարցումները, այնպես էլ

առկա ու հեռակա ուսուցման համակարգերում Համալսարանում ստացած կրթությունն ինչ շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները առցանց կազմակերպելու ուղղությամբ:

2015/2016 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 8652 ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության 64,3 %-ը: Հարցումների արդյունքում հումանիտար մասնագիտությունների գծով միջին միավորը կազմել է 4,51, իսկ բնագիտական մասնագիտությունների գծով՝ 4,48: Հարցումների արդյունքներն օգտագործվել են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: ԵՊՀ-ում ստացած կրթությունն ինչ շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2015/2016 ուստարում մասնակցել է բակալավրիատի 2413 և մագիստրատուրայի 923 շրջանավարտ: Հարցումների արդյունքները կիրառվել են ուսուցման և ուսումնառության գործընթացների կազմակերպման որակի բարելավման նպատակով:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստման արդյունավետությանը նպաստում է նաև արտաքին շահակիցների՝ մասնավորապես գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: Այս տեսակետից արդեն բարի ավանդույթ է դարձել Համալսարան - «Մինոփսիս-Արմենիա» փոխշահավետ համագործակցությունը, որի շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում 2015/2016 ուստարում ընդգրկվել են ԵՊՀ Բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի 48 սովորողներ: «Մասս-Մեդիա» կրթական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում նույն ուստարում կրթական գործընթացներում ընդգրկվել են ԵՊՀ մագիստրատուրայի 39 սովորողներ, ովքեր մասնագիտացել են «Ռեժիսուրա», «Սցենարական գործ», «Օպերատորություն» «Լրագրություն» և «Կառավարում» կրթական ծրագրերով:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները ՀՀ և արտասահմանյան գործընկեր մի շարք կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող TEMPUS “ARMENQA” ազգային նշանակության եռամյա ծրագրի շրջանակներում՝ միտված ՀՀ-ում որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացմանը բուհական համակարգում:

## 2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

Շարունակվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները: Ինչպես ամեն տարի, անցած ուսումնական տարում ևս իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը: Կատարվել են աշխատանքներ ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Կատարելագործվել է էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision YSU» ծրագրի ավտոմատացված համակարգը, կարևորվել են աշխատանքներն ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման ուղղությամբ: Նույն համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են աշխատանքներ ամբիոնների կատարողականի վերահսկման ուղղությամբ, որոնց արդյունքները հաշվի են առնվում հաջորդ ուսումնական տարվա ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:

Կրթության որակի բարելավման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների և փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի և թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ դրա արդյունավետ օգտագործման և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ: Ավարտվել են դասատախտակները էլեկտրոնային ձևով կազմակերպելու ուղղությամբ աշխատանքները, որի կիրառումը հնարավորություն է տալիս նաև ավտոմատացնել լսարանային բաշխվածությունը, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպումը:

2015/2016 ուստարում ևս ֆակուլտետներում և կենտրոններում շարունակվել են ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակով նրա անձնական գործի վարումը՝ դեկանատների գործավարությունը առավել հստակեցնելու և գործառույթները օպտիմալացնելու համար:

Շարունակվել են աշխատանքները ուսումնական գործընթացին վերաբերող թղթաբանությունն ավտոմատացնելու ուղղությամբ: 30 և ավելի հրամանների ձևանմուշների և ներբուհական տեղափոխությունների հաշվարկների ընթացակարգից բացի՝ ավտոմատացվել են նաև քննաշրջանից և լուծարքային շրջանից հետո պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփումը, գրեթե բոլոր դիմումների ձևանմուշները:

Համակարգվել և վերահաստատվել է մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացակարգը, «SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացվել է անվանական ցուցակների ամփոփման գործընթացը:

Ձեռնարկվել են աշխատանքներ վերականգնվող ուսանողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը «SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների նոր ցանկը և դրա հետ կապված նոր որակավորումները ԵՊՀ-ին 2016/2017 ուստարվանից հնարավորություն չեն տալիս շրջանավարտներին շնորհել նաև մանկավարժի որակավորում: Այս կապակցությամբ ԿԳՆ-ի հետ աշխատանքներ են տարվում լրացուցիչ կրեդիտների կուտակման ճանապարհով մի շարք մասնագիտությունների գծով շրջանավարտներին շնորհելու նաև մանկավարժի որակավորում:

Ընթացիկ ուստարում իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման խիստ պահանջներով՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝ նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1361 ուսանողի, որոնցից 392-ը բակալավրիատի 1-ին, 340-ը 2-րդ, 346-ը 3-րդ կուրսերից են, իսկ 283-ը մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 131 (33,4 %), 2-րդ կուրսի 97 (28,5 %), 3-րդ կուրսի 83 (24 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 76 (26,3 %) ուսանողներ:

Բարձր առաջադիմությամբ ուսանողներին, ովքեր ցուցաբերել են նաև հասարակական ակտիվություն, հատկացվել է կրթաթոշակ: Բացի պետական կրթաթոշակից՝

հատկացվել են նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակներ, որոնց թիվը 58 է, իսկ ստացողների թիվը՝ 62: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Այդ զեղչերից 1-ին կիսամյակում օգտվել է 1992 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2710: Նրանցից 1-ին կիսամյակում 1608-ը եղել են բակալավրիատի, 201-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 183-ը՝ աշխատողների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 2313-ը եղել են բակալավրիատի, 220-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 177-ը՝ աշխատողների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի գումարը կազմում է ավելի քան 395 մլն դրամ: Ինչպես նախորդ, հաշվետու ուստարում ևս իրականացված գործընթացն ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների՝ մանրամասն ամփոփվել է առանձին գրքի տեսքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:

Զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով շարունակվել են առաջադիմության վերահսկման աշխատանքները: Հաշվետու ուստարում ՏՏԿՀ կենտրոնում և Ուսումնամեթոդական վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների դեկանատների և կենտրոնների աշխատողների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով բոլոր գործողություններն իրականացվել են՝ հետևելով ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին:

Իրականացվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքներ՝ տեսագրելու ամփոփիչ ատեստավորման ընթացքը և ապահովելու ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման գործընթացը:

Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2015/2016 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 5309 դիպլոմ, որից 3071-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1164-ը՝ մագիստրատուրայում, 546-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 422-ը՝ մագիստրատուրայում, 57-ը՝ նախորդ տարիների (այդ թվում՝ 1-ը նախորդ տարիների 5-րդ կուրս) շրջանավարտների: Վերականգնվել և տրվել են շրջանավարտների 49 դիպլոմի կրկնօրինակներ:

Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու ուսումնական տարում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի և տեղափոխությունների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

ԿԳՆ ԿՏԱԿ-ի կողմից իրականացվող ՀՀ բուհերի վարկանշավորման գործընթացի համար ինչպես նախորդ, հաշվետու ուստարում ևս հավաքագրվել են ԵՊՀ վարկանշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, ամփոփվել և ներկայացվել են ԿՏԱԿ: Ինչպես նախորդ երկու տարիներին, 2015 թ. ևս բուհերի վարկանշավորման արդյունքում ԵՊՀ-ն իր ցուցանիշներով առաջինն էր:

Բանկերի կողմից ուսման վարձի վճարման համար ուսանողներին տրամադրվող վարկի գործընթացը ավելի հստակ կազմակերպելու համար յուրաքանչյուր կիսամյակ ԵՊՀ-ն ՀՀ բանկերի միություն է ուղարկում ուսումն ընդհատած ուսանողների տվյալները՝ նրանց վարկեր չտրամադրելու համար:

2015/2016 ուստարում շարունակվել է համագործակցությունը ՀՀ ՊՆ բարձրագույն կրթական հաստատությունների հետ՝ նրանց ցուցաբերելով մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ: ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում

ԵՊՀ դասախոսների կողմից այդ բուհում մի շարք առարկաների դասավանդման գործընթացի կազմակերպումը:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են աշխատանքներ ԵՊՀ անվճար համակարգի արական սեռի ուսանողների՝ ՊՆ ռազմական ամբիոնում կազմակերպվող դասընթացներին կամավորության սկզբունքով մասնակցելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 50 ուսանող ընդգրկվել է այդ գործընթացում:

Շարունակելով համագործակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության հետ՝ 2016/2017 ուստարում ԵՊՀ-ում մի շարք մասնագիտություններով ընդունելություն է կատարվել պաշտպանության նախարարության համար նախատեսված տեղերով: Մասնավորապես՝ «Ռադիոֆիզիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Իրանագիտություն» և «Թյուրքագիտություն» կրթական ծրագրերով ընդհանուր առմամբ ընդունվել է 22 հոգի, ովքեր Համալսարանն ավարտելուց հետո պայմանագրային աշխատանքի կանցնեն ՀՀ զինված ուժերում:

Համալսարանում ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է պրակտիկան: Նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար ներկայումս Համալսարանն ունի 95 պայմանագիր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ վարչապետի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, նախարարությունները, ԶԼՄ խմբագրությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները): Պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել գործատուների պահանջները, քանի որ այդ հանգամանքը հետագայում աշխատանքի տեղավորման հարցում կարող է նպաստել շրջանավարտների մրցունակ լինելուն: Դրա շնորհիվ որոշ շրջանավարտներ արդեն աշխատանքի են անցել ՀՀ Ազգային ժողովում, Պաշտպանության նախարարությունում, դպրոցներում, դեղագործական կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում և այլ կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պետությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտ-



րոններում: Բացված նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմմանը:

Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 5961 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա են անցել 1356-ը, որոնցից 712-ը՝ դաշտային: Բոլոր պրակտիկաներն անցկացվել են ռեկտորատի կողմից հաստատված երթուղիներով:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի «ԳԲՀ ռադիոֆիզիկա» մասնագիտացման ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել «Նեյշնլ-ինստրումենթս»-ի հայաստանյան մասնաճյուղում: Ֆիզիկայի ֆակուլտետի միջուկային ֆիզիկայի ամբիոնի ուսանողները արտադրական պրակտիկան անց են կացրել ՀԱԷԿ ՓԲԸ-ում:

Համալսարանականների ուսումնական (դաշտային) պրակտիկան անցկացվել է ԵՊՀ-ի Բյուրականի և Հանքավանի հանգրվաններում (Աշխարհագրության և երկրաբանության, Կենսաբանության ֆակուլտետների ուսանողների համար): Այդ ֆակուլտետների, ինչպես նաև Դեղագիտության և քիմիայի, Պատմության, Աստվածաբանության ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով՝ ՀՀ-ում: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողները ծանոթացել են Սյունիքի մարզի գետահովիտների երկրաձևաբանությանը: Հաշվետու ուստարում հատուկ ուշադրություն է դարձվել հայագիտությանը, որի նպատակն էր պրակտիկայի միջոցով էլ ավելի ամրապնդել ուսանողների գիտելիքները նշված ուղղությամբ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի արտադրական պրակտիկան ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես անց է կացվել Շուշիում:

### 3. Ընդունելության նախապատրաստում

Վերջին տարիներին դիմորդների հավաքագրման գործում առաջացել են որոշակի դժվարություններ՝ կապված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողությունների հետ: Դրանք են.

- դեպի բուհեր դիմորդների թվի նվազումը,
- պետական բուհերի միջև մրցակցության ուժեղացումը,
- ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայությունը,
- Ամերիկյան համալսարանում բակալավրիատի ընդունելությունը,
- Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացումը,
- վերջինների, ինչպես նաև Ֆրանսիական և Սլավոնական համալսարանների

հետ բակալավրիատի ընդունելության մրցակցային անհավասար պայմանները:

Հաշվի առնելով առկա դժվարությունները՝ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը հաշվետու ուստարում դիմորդների հոսքի պահպանման նպատակով մեծ աշխատանք է կատարել ընդունելության մարքեթինգային գործընթացները զարգացնելու ուղղությամբ:

Ուսումնական տարվա սկզբից դպրոցներում և քոլեջներում պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-զրույցներ և քննարկումներ աշակերտների, սովորողների, ուսուցիչների, նաև ծնողական խորհուրդների հետ, որոնց ընթացքում նրանց ներկայացվել են ԵՊՀ կրթական ծրագրերն ու մասնագիտությունները, մանրամասն պարզաբանվել են ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու և շարունակական կրթության կարգերը: Այս գործընթացին վարչության աշխատակիցների հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցել են ԵՊՀ շատ ֆակուլտետների դեկաններ և պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակավոր և փորձառու տասնյակ ներկայացուցիչներ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուսումնական տարում մեծ ուշադրություն է դարձվել ավագ դպրոցի կայացման գործին՝ օգտագործելով ԵՊՀ-ի և՛ պրոֆեսորադասախոսական, և՛ նյութատեխնիկական ներուժը: Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծմանն աջակցելու նպատակով մեր ռեսուրսներն ավելի նպատակային օգտագործելու համար 2015/2016 ուստարում ԵՊՀ-ն

համագործակցության պայմանագիր կնքեց Երևանի և ՀՀ մարզերի ևս 5 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 38-ի:

Համալսարանի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող մայրաքաղաքի 23 ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 36 հեղինակավոր և փորձառու դասախոսներ 21 լրացուցիչ կրթական ծրագրով հատուկ դասընթացներ են վարել, իսկ նրանց վարձատրությունն իրականացվել է ԵՊՀ-ի միջոցների հաշվին: Մինևույն ժամանակ, Համալսարանի հետ պայմանագիր կնքած ՀՀ մարզերի 12 ավագ դպրոցներում ԵՊՀ դասախոսների կողմից իրականացվել է 80 առանձին դասախոսություն:

Շարունակվել են ակտիվ աշխատանքները ԵՊՀ-ի հետ համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր ունեցող ՀՀ երկու տասնյակից ավելի հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում:

Բարձր վարկանիշ ունեցող մեր կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների և քոլեջների սովորողների մասնագիտական կողմնորոշումը՝ հաշվետու ուստարում 2000-ից ավելի ապագա դիմորդների համար կազմակերպվել են «Բաց դռների օրեր» և նպատակային ճանաչողական այցեր Համալսարան: Այստեղ նրանց հնարավորություն է ընձեռվել հանդիպելու Համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության և դասախոսական կազմի հետ՝ ԵՊՀ կրթական ծրագրերին և մասնագիտություններին, Համալսարանի անցած ուղուն և առաքելությանը ծանոթանալու նպատակով:

ԵՊՀ-ում հյուրընկալված աշակերտները ըստ մասնագիտական կողմնորոշման նաև դասախոսություններ են լսել տարբեր ֆակուլտետներում: Բնագիտական հոսքերի աշակերտների համար «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Ջրաօդերևութաբանություն», «Կենսաբանություն» առարկաներից անց են կացվել լաբորատոր պարապմունքներ:

Ամբողջ տարվա ընթացքում անվճար դասընթացներ են կազմակերպվել «Ստեղծագործական աշխատանք», «Բանավոր հաղորդակցման մշակույթ», «Ռուսաց լեզու և գրականություն» առարկաներից, որոնց մասնակցել է ավելի քան 150 աշակերտ:

Վարչությունը ֆակուլտետների ղեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի լայն ներգրավվածության շնորհիվ հանրակրթական ուսումնական հաստա-

տություններում կազմակերպել է 315 ակնարկային և բովանդակային դասախոսություններ, թեմատիկ քննարկումներ, ինչպես նաև ուսուցիչների համար՝ մեթոդական խորհրդատվություններ:

Վարչությունը դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար 8 տարի անընդմեջ կազմակերպում և անց է կացնում հանրակրթական 14 առարկաների գծով օլիմպիադա ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում: 2016 թ. առաջին անգամ օլիմպիադան անցկացվեց 2 փուլով. մասնակիցների թիվն առաջին փուլում 3010 էր, իսկ 2-րդ փուլում՝ 598:

ԵՊՀ գիտական խորհուրդն ընդունել է որոշում՝ 2016 թ. օլիմպիադայում հաղթած և I, II և III կարգի դիպլոմների արժանացած 151 աշակերտի Համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ տրամադրվելու վերաբերյալ: Դա հրաշալի խթան է առավել խելացի աշակերտներին դեպի ԵՊՀ ուղղորդելու: Դրանից զատ, օլիմպիադայի 2-րդ փուլում հաղթած 151 դիպլոմակիրները, ինչպես նաև գովասանագրի արժանացած 189 աշակերտները հանդիսավոր պայմաններում ԵՊՀ ղեկավարության կողմից պարգևատրվեցին արժեքավոր գրքերով: Ակնհայտ է, որ այդօրինակ աշխատանքների արդյունքում օլիմպիադայում հաղթած աշակերտների շուրջ 60 %-ը ընդունվում է ԵՊՀ:

Այս տարի վարչությունը սկիզբ դրեց մի նոր նախաձեռնության ևս. ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող դպրոցների, հիմնականում ֆիզմաթ հոսքերի 10-11-րդ դասարանների աշակերտների համար Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում կազմակերպեց «Ամառային դպրոց» «Ֆիզիկա» և «Մաթեմատիկա» առարկաներից: «Ամառային դպրոց»-ի դասընթացները բարձր մակարդակով վարեցին Մաթեմատիկայի և մեխանիկայի ու Ֆիզիկայի ֆակուլտետների 16 փորձառու դասախոսներ: Անհրաժեշտ ծախսերի 80 %-ը կամ 4 մլն դրամը տրամադրվել է ԵՊՀ միջոցների հաշվին:

Վարչությունը հաշվետու ժամանակաշրջանում ակտիվացրել է դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում՝ այնտեղ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովվելով անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:

2015/2016 ուսումնական տարում ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը դիմորդներին հասանելի դարձնելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց -2016» ձեռնարկը, որն անհրաժեշտ տեղեկատվություն է պարունակում ԵՊՀ ֆակուլտետների, կրթական ծրագրերի, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին: Նույն նպատակով պատրաստվել և 8000 տպաքանակով հրատարակվել են նաև ԵՊՀ-ն ներկայացնող գունավոր բուկլետներ: Ուղեցույցները և բուկլետներն անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին: Կատարելագործվել է Համալսարանի կայքէջում դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը՝ ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ դիմորդի ուղեցույցը և բակալավրիատի ընդունելության կարգը կայքում տեղադրելու միջոցով:

Միաժամանակ, հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ դպրոցներում տարվող աշխատանքներն ավելի լայն թափով իրականացնելու, դրանով իսկ ավագ դպրոցի կայացման գործին մեր նպաստը առավելագույնս բերելու համար 2015 թ. սեպտեմբերին դիմել ենք ՀՀ կրթության և գիտության նախարարին և նրա միջոցով ՀՀ կառավարությանը՝ Երևանի Լ. Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը հանձնելու ԵՊՀ-ին՝ Համալսարանի կազմում հենակետային վարժարան ստեղծելու նպատակով: Համոզված ենք, որ այն հետագայում կդառնա հանրապետությունում լավագույներից մեկը: Հենակետային վարժարանը, գտնվելով ԵՊՀ-ի անմիջական հարևանությամբ, մեծ հնարավորություն կընձեռի առավելագույնս օգտագործելու Համալսարանի լաբորատոր բազան և մարզահամալիրը, ինչպես նաև կապահովի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Ցանկանում ենք բարձրացնել մեզ համար կենսական նշանակություն ունեցող մի հարց ևս:

1995 թ. մինչև 2008 թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետները համալրվում էին նաև հարցազրույցով ընդունելությամբ, ինչն ապահովում էր անհրաժեշտ թվով դիմորդներով: Վերջին տարիներին նշված ֆակուլտետներում ընդունելությունն իրականացվում է միայն միասնական քննություններով: Այդ տարի-

ներին դիմորդների թվի անընդհատ նվազումը առաջին հերթին բացասական ազդեցություն ունեցավ վերոնշյալ ֆակուլտետների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնարար գիտությունների զարգացումը և դրա արդյունքների կիրառումը կիթանի ՀՀ տնտեսությունը, առանց որի անհնար է մեր երկրի հետագա առաջընթացը, այսօր խիստ անհրաժեշտ ենք համարում բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելության վերականգնումը:

Հարկ է նշել նաև, որ այս հարցը քննարկվել է ՀՀ Նախագահի մոտ անցկացված ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհրդի նիստի ժամանակ:

Դեպի Համալսարան դիմորդների հոսքի պահպանման նպատակով հաշվետու ուստարում ծավալուն աշխատանք է կատարվել նաև քոլեջների շրջանավարտների հետ. նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Արդյունքում, ներկա ուստարում ԵՊՀ-ն ևս 1 պետական մասնագիտական քոլեջի հետ կնքեց շարունակական կրթության վերաբերյալ համագործակցության պայմանագիր՝ դրանց թիվը հասցնելով 17-ի: Ըստ այդ պայմանագրի՝ ԵՊՀ-ն կաջակցի քոլեջներին ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բարելավման գործում, ինչպես նաև կիրականացնի կադրերի որակավորման բարձրացման գործառույթ: Այս ամենի արդյունքում, շարունակական կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից ԵՊՀ-ն 15 մասնագիտությունների գծով 128 հայտ է ստացել:

Հաշվետու ժամանակաշրջանում Մինչհամալսարանական կրթության վարչությունը, ձգտելով կատարելագործելու նախապատրաստական դասընթացների համակարգը, ձևավորել է դասընթացների լայն ընտրանի (12 հանրակրթական առարկա)՝ ըստ կրթական ծրագրերի, ապահովելով նաև դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու, ինչպես նաև ավարտական քննությունների թեստերը պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առարկաների: Ունկնդիրների ուսումը կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական

պլաններով, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների համար մախատեսված ծրագրերին: Դասավանդվող բոլոր առարկաներից ընթացիկ տարվա փետրվարին կազմակերպվել և անցկացվել են ստուգարքներ, ապրիլին՝ ստուգողական գրավոր աշխատանքներ, իսկ մայիսի վերջին տասնօրյակում՝ ավարտական քննություններ:

Նախապատրաստական դասընթացների բաժնի 52 ունկնդիրների մեծ մասը, հաջողությամբ հանձնելով առկա ուսուցման ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ, իսկ մյուսները դիմել են հեռակա բաժիններ:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու ուստարում ևս վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2016 թ. ընդունելության կազմակերպման գործընթացին, որից այս անգամ ևս Համալսարանը պատվով դուրս եկավ:

#### **4. Ընդունելություն**

Ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում ընդունելությունը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկի:

2016/2017 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 3318 և 1602: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում ԵՊՀ բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 30 %:

ԵՊՀ բակալավրիատ ընդունվել է 2988 հոգի (անվճար՝ 428, վճարովի՝ 2560), իսկ մագիստրատուրա՝ 1185 (անվճար՝ 438, վճարովի՝ 747):

Համալսարանի բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 31 %: ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իզական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 65,58 % և 65,56 %:

ԵՊՀ բակալավրիատ դիմել է 51, իսկ մագիստրատուրա՝ 20 օտարերկրյա քաղաքացի: Նրանցից ընդունվել են համապատասխանաբար՝ 35-ը և 15-ը:

2016/2017 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 460, որից ընդունվել է 386-ը, իսկ մագիստրատուրայում՝ 404, որից ընդունվել է 327-ը:

## **5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ**

2015/2016 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թվակազմը եղել է 13464, որից 11665-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 10025-ը վճարովի), 1769-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 911-ը վճարովի), իսկ 30-ը եղել են Միջազգային կրթական կենտրոնի ուսանողներ:

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 3780 ուսանող, որից 3253-ը՝ բակալավրիատում, իսկ 527-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 293, որից 265-ը՝ առկա, 28-ը՝ հեռակա ուսուցմամբ :

ԵՊՀ հիմնական ուսանողական թվակազմում (17244՝ առանց Իջևանի մասնաճյուղի) մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 13,3 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 1,7 % և 21,9 %:

2015/2016 ուստարում Համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 4227 շրջանավարտ, որից 3066-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 1161-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 966 շրջանավարտ, որից 543-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 423-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 533 (17,4 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 471 (40,1 %): Հեռակա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 4 (0,7 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 28 (6,6 %):

## **6. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն**

2015/2016 ուսումնական տարում Համալսարանի հիմնական դասախոսական կազմում եղել է 1242 դասախոս, որից պրոֆեսոր՝ 175 (14,1 %), դոցենտ՝ 482 (38,8 %),



ասիստենտ և դասախոս՝ 585 (47,1 %): Այդ կազմի 70,5 %-ն ունի գիտական աստիճան: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 56,6 %:

Ինչպես և նախորդ տարիներին, իրականացվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթաց, մասնավորապես՝ բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է 42 նոր դասախոսներով, որոնցից 3-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 200, 35-65 տարեկաններինը՝ 806, իսկ 65-ից բարձր՝ 236:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2015/2016 ուստարում կազմել է 13,6 (նախորդ ուստարում եղել է 13,5):

## **7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում**

Երևանի պետական համալսարանը հետբուհական լրացուցիչ կրթությունը դիտարկում է որպես զարգացման ռազմավարական բաղադրիչ՝ այն նպատակաուղղելով մարդկային ռեսուրսների զարգացմանը՝ և՛ Համալսարանի, և՛ հանրության հետ կապերի շրջանակներում: Դրանով պայմանավորված՝ ԵՊՀ-ում իրականացվում է հետբուհական լրացուցիչ կրթության երկու ծրագիր՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում:

Առաջին ծրագրով ԵՊՀ-ն՝ իբրև գործատու, իր հանձնառությունն է իրականացնում: 2011-ից ԵՊՀ-ում ներդրվել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր ծրագիր, նոր և՛ ձևով, և՛ բովանդակությամբ: Առաջին անգամ ԵՊՀ-ն իրականացնում էր նման ծրագիր՝ կրեդիտային համակարգով: Բովանդակային առումով նորությունն այն էր, որ ծրագիրը ներառում էր դասախոսի գործունեության բոլոր բաղադրիչները՝ նորագույն չափանիշներով: Ծրագրով նախատեսվում էր դասախոսի համար ապահովել ակադեմիական անզլերենի բավարար իմացություն, համակարգչային հմտությունների տիրապետում, մանկավարժական-հոգեբանական նորագույն գիտելիքների յուրացում, մասնագիտության արդի հիմնախնդիրների իմացություն և հետազոտական-մեթոդական գործունեության խթանում:

Հաշվետու ժամանակաշրջանը ծրագրի ավարտական փուլն էր: Ամփոփելով արդյունքները՝ ստացել ենք հետևյալ պատկերը:

Ծրագրի ավարտական պահանջներից մեկը անգլերենի իմացությունն էր: Դասախոսների համար սահմանվել էր միջազգային հավաստագրման պահանջ՝ լեզվիմացության եվրոպական համակարգի չափանիշներով: Ծրագրին մասնակից 839 դասախոսից ընդամենը 327-ն է հավաստել անգլերենի իմացությունը՝ B1 – C2 մակարդակով:

Անգլերենի իմացությանը կարևորություն տալը ԵՊՀ-ի համար ուներ 3 նպատակ.

1. Բարձրացնել անգլերեն դասավանդողների մասնագիտական պատրաստականությունը:
2. Խթանել դասախոսների ակադեմիական շարժունությունը, մասնավորապես մասնակցությունը միջազգային գիտաժողովներին:
3. Պայմաններ նախապատրաստել ԵՊՀ-ում անցնելու նաև օտարալեզու կրթական ծրագրերի իրականացմանը:

Չնայած վերոնշյալ որոշակի ձեռքբերումներին՝ պետք է ասել, որ ծրագրի առաջին փուլի արդյունքները այդ հնարավորությունը դեռևս չեն տալիս:

Ծրագրի կրթական երկրորդ բաղադրիչի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների յուրացման արդյունքները առավել գոհացուցիչ են. կարելի է ասել՝ ԵՊՀ դասախոսական ամբողջ կազմն անցավ համակարգչային թերապիա՝ տիրապետելով լսարանին անհրաժեշտ համակարգչային հմտություններին:

Ծրագրում հետազոտական-մեթոդական բաղադրիչի առկայությունը անշուշտ խթանեց դասախոսների գիտական գործունեությունը. 6000-ից ավելի գիտական աշխատանք, 500-ից ավելի հոդված միջազգային գրախոսվող հանդեսներում: Այս առումով պետք է նշել ֆիզիկոսների և կենսաբանների ձեռքբերումները:

Կրեդիտային համակարգը հնարավորություն է տալիս նաև համադրելու ծրագրի կրթական և հետազոտական կառուցամասերի արդյունքները: Ծրագրի ունկնդիրները հավաքել են 27667 կրեդիտ, որից 16060-ը՝ կրթական, 11607-ը՝ գիտական: 867 դասախոսից միայն 482-ն է կատարել ծրագրով սահմանված բոլոր պահանջները: Ինչո՞ւ, երբ շատ ավելի մեծ թվով դասախոսներ են հասել սահմանված կրեդիտաչափին (30): Վերլուծությունը պարզում է, որ ծրագիրը հաջողությամբ ավարտել են ստեղծագոր-

ծող դասախոսները: Բազմաթիվ ունկնդիրներ պարզապես չեն կարողացել ապահովել պահանջվող 3 գիտական կրեդիտը: Շուրջ 130 դասախոս 5 տարում գիտական որևէ աշխատանք չի ներկայացրել: Մի շարք ամբիոններ պետք է լուրջ վերլուծություններ անեն այս առումով:

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը շարունակական բազմափուլ գործընթաց է: ԵՊՀ գիտխորհուրդն արդեն հաստատել է դասախոսների կատարելագործման 2-րդ փուլի ծրագիրը: Նրանում նախատեսված են այնպիսի փոփոխություններ, որոնք կլրացնեն 1-ին փուլի բացթողումները:

Նոր ծրագրի ընդհանուր աշխատածավալը դարձյալ 30 կրեդիտ է, սակայն սահմանափակվել են պարտադիր բաղադրիչները՝ դասախոսին տալով լայն հնարավորություն՝ ծրագրի կամընտրական մոդուլների հարուստ շտեմարանից ապահովելու իր համար նախընտրելի կոմպլեքսների զարգացումը:

Կրթական կառուցամասի համար սահմանված է տարբերակված պարտադիր բեռնվածություն (2, 5, 7): Ծրագրի բոլոր մասնակիցների համար պարտադիր է ընդամենը 1 դասընթաց՝ մասնագիտական պատրաստությունից: Անգլերենից 3 կրեդիտ ստանալը պարտադիր է միայն այն դասախոսների համար, ովքեր դեռևս չունեն իմացության պահանջվող բարձրագույն մակարդակը (մասնագետները՝ C2, ոչ մասնագետները՝ C1): Իսկ սկսնակ դասախոսների համար պարտադիր է ևս 1 դասընթաց՝ մանկավարժական պատրաստությունից:

Հետազոտական կառուցամասի համար սահմանված է 5 կրեդիտ պարտադիր բեռնվածություն՝ դասախոսի ընտրությամբ: Ավելացվել են գիտական հոդվածների համար հատկացվող կրեդիտները՝ ըստ գիտական հանդեսի վարկանիշի: Այսինքն՝ Համալսարանը, հավատարիմ մնալով իր ռազմավարությանը, դասախոսներին առաջարկում է ըստ հնարավորությունների և առավել դյուրությամբ կուտակել 30 կրեդիտը:

Լրացուցիչ կրթության 2-րդ ծրագիրը մասնագիտական վերապատրաստումն է: Այստեղ ևս ԵՊՀ-ն, հավատարիմ իր առաքելությանը, մասնակցում է հանրային ծառայողների մասնագիտական կատարելագործմանը: ԵՊՀ-ում են վերապատրաստվում ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ Նախագահի, Կառավարության և տարբեր նախարարությունների աշխատակազմերի պետծառայողները: Այս ծրագրի հետ կապված՝ ուզում ենք շեշտել ԵՊՀ հանձնառությունը. Հա-

մալսարանը ոչ միայն բարձր մակարդակով է կազմակերպում վերապատրաստման դասընթացները, այլև ակտիվորեն մասնակցում է ծրագրեր կազմելուն. դրանցից շատերը կյանքի են կոչվել Համալսարանի նախաձեռնությամբ:

Կարևորելով մասնագիտական վերապատրաստման կրթական ծրագիրը, որն ապահովում է Համալսարանի կապը հանրության հետ, ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունն առաջարկել է օրենսդրական փոփոխություններով խրախուսել գործատուներին՝ մոտիվացնելու ներդրումներն այս ոլորտում, ինչպես նաև խրախուսել վերապատրաստող կազմակերպություններին: Այս հարցերի լուծումը, թերևս, կկարգավորի աշխատաշուկա – կրթաշուկա հարաբերությունները: Նորաստեղծ «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքէջի գործարկումը նույնպես կնպաստի վերոնշյալ հարցերի լուծմանը:

## **8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում**

2015/2016 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀ) իրականացրել է լայնածավալ գործունեություն:

Շարունակվել են աշխատանքները կրթական նոր տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Ներկայացվել են ԱՄՆ երկու արտոնագրերի հայտեր էլեկտրոնային սարքերի և համակարգերի թեստավորման բնագավառում:

Մեկնարկվել են աշխատանքները 2015 թ-ին Եվրամիության ERASMUS+ ծրագրի շրջանակում ստացված «Երկու փուլ պարունակող նորարարական կրթական ծրագիր միկրոէլեկտրոնային ճարտարագիտության բնագավառում» (“Development of two cycle innovative curricula in microelectronic engineering” - DOCMEN) դրամաշնորհի ուղղությամբ: ԵՊՀ-ում մշակված էլեկտրոնային թեստավորման և ներդրված համակարգերի

նախագծման դասընթացները ընտրվել են մշակվող ուսումնական ծրագրում ընդգրկվելու համար:

2016 թ. մեկնարկած ERASMUS+ ծրագրի մեկ այլ դրամաշնորհի՝ «Շարժունակություն բուհերի ուսանողների և անձնակազմի համար» առաջին հիմքային գործողության շրջանակներում և միջհամալսարանական պայմանագրի համաձայն՝ նախատեսվում է 2016-2021 թթ. ժամանակահատվածում կազմակերպել Բելգիայի Հասելտի և Լիմբուրգի համալսարանների և ՏՏԿՀ կենտրոնի ուսանողների ու դասախոսների փոխադարձ այցելություններ՝ ուսուցման և փորձի փոխանակման, ինչպես նաև «Տեղեկատվական համակարգերի կառավարում» մասնագիտացման համար համատեղ կրթական ծրագրեր մշակելու նպատակով:

2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի խնդրիներից մեկի շրջանակներում իրականացվել է առցանց եղանակով «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» համահամալսարանական դասընթացի ուսումնական և գիտելիքների գնահատման տեխնիկական ապահովումը (առցանց դասընթացի համակարգում ուսանողների գրանցում, էլեկտրոնային փոստով տեխնիկական աջակցության տրամադրում, գիտելիքների ստուգման առցանց համակարգի անվտանգության ապահովում):

Շարունակվել են աշխատանքները ծրագրային գործիքների մշակման ուղղությամբ հեռախոսների, թաբլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար, որի վերաբերյալ զեկուցվել է Իսպանիայի Դեուսոո համալսարանում անցկացված՝ առցանց տեխնոլոգիաներին նվիրված միջազգային ամառային դպրոցի շրջանակներում: Շարունակական բնույթ են կրում Համացանցային համալսարանի ենթակառուցվածքի միջազգային չափորոշիչներին հարմարեցման գործընթացի իրականացումը, մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված էլեկտրոնային գրքերի շարքի մշակումը:

Համացանցային համալսարանի և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ իրականացվել է միջին մակարդակի շախմատի ռազմավարության էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացի առաջին մասը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված դասագրքերի հիման վրա:

## 9. Պլանավորում և կառավարում

Երևանի պետական համալսարանը իր գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպում և իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իր կանոնադրությամբ, բուհական կրթության համար ընդունված ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև համաձայն իր երկարաժամկետ (հնգամյա) ռազմավարական ծրագրերի:

ԵՊՀ զարգացման ռազմավարական նախորդ հնգամյա ծրագիրը՝ բաղկացած 9 ռազմավարական նպատակից և դրանց համապատասխան 29 խնդրից, նպատակաուղղված էր բուհի գործունեության կազմակերպմանը 2010-2014 թթ.: Ծրագրի իրականացման ընթացքում պարբերաբար անցկացված մշտադիտարկման (մոնիթորինգի) տվյալների հիման վրա կատարվել է ՌԾ-ի իրականացման գնահատում: Ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծության արդյունքում արձանագրվել են հաջողությունները և բացահայտվել թերացումները, որոնք հիմք են հանդիսացել նոր ռազմավարական ծրագրի մշակման համար:

ԵՊՀ նոր՝ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներն սկսվել են 2014/2015 ուստարում: Հատուկ այդ նպատակով ստեղծված համակարգող հանձնաժողովի կազմում և 9 աշխատանքային խմբերում ընդգրկվել են Համալսարանի տարբեր ստորաբաժանումների վարչական աշխատողներ, դասախոսներ և ուսանողներ, որոնցից շատերը նախկինում ունեցել են նման աշխատանքի փորձ:

Համակարգող հանձնաժողովը և աշխատանքային խմբերը սահմանված գրաֆիկով տևական աշխատանքներ են իրականացրել ՌԾ-ի և դրա իրականացման ժամանակացույց-պլանի մշակման ուղղությամբ: Ըստ հաստատված ժամանակացույցի՝ համապատասխան պրոռեկտորների ղեկավարությամբ աշխատանքային խմբերում իրականացվել են ծավալուն և հետևողական աշխատանքներ, որոնց արդյունքները պարբերաբար քննարկվել են նաև Համակարգող հանձնաժողովի նիստերում:

Նշված փաստաթղթերի նախագծերը ԵՊՀ բոլոր ստորաբաժանումներում քննարկվելուց հետո լրամշակվել և Գիտխորհրդի առաջարկությամբ ներկայացվել են ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2015 թ.

դեկտեմբերի 23-ի նիստում: ԵՊՀ ռազմավարական պլանավորման պատմության մեջ առաջին անգամ կազմվել է նաև ԵՊՀ ռազմավարական ծրագրի բյուջեի նախագիծը:

Հիմք ընդունելով ԵՊՀ ռազմավարական ծրագրի և դրա իրականացման ժամանակացույց-պլանը՝ Համալսարանի բոլոր ֆակուլտետները և կրթական կենտրոնները հաշվետու ժամանակաշրջանում մշակել և իրենց ԳԽ-ում ընդունել են իրենց ռազմավարական ծրագրերը:

\* \* \*

Ամփոփելով 2015/2016 ուստարում ԵՊՀ իրականացրած կրթական գործունեությունը՝ նշենք, որ ընդհանուր առմամբ այն եղել է արդյունավետ. արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ, հաջողությամբ իրականացվել են նախատեսված շատ գործընթացներ: Այդուհանդերձ, եղել են նաև բացթողումներ ու թերացումներ: Մասնավորապես՝

- Նկատելի են թերացումները որակի ներքին մշակույթի ձևավորման գործում՝ պայմանավորված ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության ցածր մակարդակով:
- Մի շարք գործընթացներում դեռևս ամբողջովին չի իրականացվում որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը:
- Որակի ապահովման ոչ բոլոր ընթացակարգերն են լիովին գործում, մասնավորապես՝ ուսանողների գնահատման, ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ոլորտներում:
- Դեռևս չեն գործում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական գնահատման գործընթացները:
- Օրակարգային խնդիր է մնում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:
- Մտահոգիչ է նաև այն, որ ԵՊՀ դասախոսների զգալի մասը դեռևս չունի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված դասընթացներ և այլ ուսումնական մոդուլներ:

- Առաջնային է նաև դասախոսական կազմի բավարար վարձատրության հարցը, քանի որ այն դեռևս չի հասել ցանկալի մակարդակին՝ պայմանավորված ցածր պետական ֆինանսավորմամբ և ուսման ցածր վարձաչափերով:
- Բարելավման և ակտիվացման կարիք ունեն ԵՊՀ կարևորագույն արտաքին շահակիցներին՝ շրջանավարտներին, հիմնական գործատու կազմակերպություններին և աշխատաշուկայի ներկայացուցիչներին կրթական ծրագրերի մասնագիտական փորձաքննության գործընթացներում ներգրավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:



## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015/2016 ուսումնական տարում ԵՊՀ-ն արդյունավետ գործունեություն է ծավալել նաև գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Գիտական աշխատանքները հիմնականում ընթացել են երեք ուղղությամբ՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Բազային ծրագրերի ոլորտում ԵՊՀ-ում 1 նոր գիտահետազոտական լաբորատորիա է ստեղծվել: Մի շարք համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում և դրամաշնորհներում: Հաշվետու ժամանակաշրջանում գիտահետազոտական գործունեություն է իրականացվել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, Կենսաբանության ինստիտուտում, 35 գիտահետազոտական կենտրոններում և լաբորատորիաներում: Ֆիզիկայի ոլորտում գիտահետազոտական աշխատանքների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2016 թ. մարտի 24-ին Ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդում առաջարկվել է ֆիզիկական հետազոտություններով զբաղվող 9 լաբորատորիաներ միավորել մեկ՝ Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի կազմում:

2015/2016 ուստարում ԵՊՀ-ում իրականացված գիտական գործունեության արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 2072 հոդվածներում, 111 մենագրություններում: Միաժամանակ, համալսարանականների կողմից ավելի քան 434 թեզիս է ներկայացվել ոչ միայն տեղական, այլ նաև միջազգային գիտաժողովներին: Հաշվետու ուստարում գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների համար որոշ համալսարանականներ արժանացել են պետական պարգևների և պատվավոր կոչումների: Այսպես, «Մովսես Խորենացի» մեդալով պարգևատրվել է Վահան Բայբուրդյանը: Բնական գիտությունների զարգացման բնագավառում ՀՀ Նախագահի մրցանակի են արժանացել Պողոս Վարդևանյանը, Վալերի Առաքելյանը և Արմեն Կարապետյանը՝ «Նուկլեինաթթուների հետ կենսաբանորեն ակտիվ միացությունների կապումը. տեսություն և փորձ» գիտական հոդվածների շարքի համար, իսկ Գրիգորի Կարագուլյանը՝ «Օրթոգոնալ շարքերի զուգամիտության որոշ հարցեր» գիտական հոդվածների շարքի համար:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ Նախագահի կրթական պարգևների են արժանացել նաև մի շարք համալսարանականներ՝ «Լավագույն բակալավր» անվանակարգում՝ Արման Գևորգյանը և Գոռ Փիլիպոսյանը (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ), «Լավագույն մագիստրանտ» անվանակարգում՝ Սարգիս Սարգսյանը և Աստղիկ Պետոյանը (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ), «Լավագույն ասպիրանտ» անվանակարգում՝ Հայկ Ծատուրյանը (Ֆիզիկայի ֆակուլտետ) և Սերգեյ Մանուկյանը (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ):

Մինչև 2015 թվականին «Հորիզոն 2020» նախագծին անդամակցելու համար Հայաստանի պայմանագիր կնքելը ԵՊՀ մի շարք գիտաշխատողներ՝ որպես գործընկերներ, արդեն իսկ մասնակցում էին տարբեր երկրների կողմից իրականացվող «Հորիզոն 2020» նախագծի ծրագրերին: Հույս ունենք, որ պայմանագիրը կնքելուց հետո այս նախագծում ԵՊՀ ներգրավվածությունը կմեծանա:

ԵՊՀ-ում 2015/2016 ուստարում շարունակվել են ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորվող 2, «Հորիզոն 2020»-ի շրջանակներում՝ 2, CRDF՝ 1, ԵԱՀԿ-ի կողմից՝ 1 գիտական ծրագրերը, որոնք են՝

- Խմբակային գրգռումները հեռանկարային նանոկառուցվածքներում (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Կրյուչկյան Գ. Յու. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Ծովային, քաղցրահամ և երկրաջերմային ջրային էկոհամակարգերում ֆագով պայմանավորված հակաբիոտիկների նկատմամբ կայուն գեների տեղափոխումը (ծրագիրը ֆինանսավորվում է CRDF-ի կողմից): Ղեկավար՝ Փանոսյան Հ. Հ. (Կենսաբանության ֆակուլտետ)
- Դեղանյութերի առաքման հիբրիդային համակարգեր՝ հիմնված մեզոպորային նյութերի, վիրոսոմների վրա (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Առաքելյան Վ. Բ. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Պինդմարմնային գազային սենսորներ անվտանգության համար և ռազմական սպառնալիքների դեմ (ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորված ծրագիր): Ղեկավար՝ Հարությունյան Վ. Մ. (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)

- Բիոսենսորների նախագծում ածխածնային նանոխողովակների օգտագործման միջոցով (USO-ի կողմից ֆինանսավորված ծրագիր): Ղեկավար՝ Մամասախլիսով Ե. Շ. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Աջակցություն Կառավարությանն ու քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրների լուծման գործընթացներում (ԵԱՀԿ նախագիծ): Ղեկավար՝ Սովսեայան Ռ. Ս. (Կայուն զարգացման կենտրոն)

ԵՊՀ-ում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնի շինարարական աշխատանքները և այդ կենտրոնի 3 լաբորատորիաների կահավորումը: Եկող տարի կարիք կլինի հարստացնելու դրանց նյութատեխնիկական բազան: Այս կենտրոնի հիմնական խնդիրն է հնարավորություն տալ և ուղղորդել ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքները: Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցության միջոցով աշխատանքներ են տարվում Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Կենտրոնն իր մեջ ներառելու է ինչպես կրթական, այնպես էլ գիտահետազոտական բաղադրիչ:

Դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի շրջանակներում ստացված արդյունքների գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը գնահատելու համար գիտական փորձաքննության են ներկայացվել վերջիններիս հաշվետվությունները: 2015 թ. ԵՊՀ-ում շարունակվել են 3 հայ-ռուսական, 3 հայ-բելառուսական դրամաշնորհային ծրագրերը, նույն թվականից գործում են 1 նպատակային, 6 հայ-ռուսական, 46 թեմատիկ դրամաշնորհային ծրագրերը: 2016 թվականից ավելացել են 2 հայ-ռուսական և 3 թեմատիկ դրամաշնորհային ծրագրեր: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի 30 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է մոտ 58 %, ինչը ցույց է տալիս, որ ԵՊՀ մասնաբաժինը աճել է նախորդ տարվա համեմատ (2014/2015 ուստարում եղել է համապատասխանաբար՝ 26 % և 51 %):

Այսօր ԵՊՀ գիտական ենթակառուցվածքներում աշխատողների թիվը 474 է, որից 387-ը գիտաշխատողներ են: Նրանցից 126-ն ընդգրկված են նաև պետական դրամաշնորհային ծրագրերում: Համալսարանի աշխատողներից և սովորողներից ևս 115-ը նույնպես ընդգրկված են պետական դրամաշնորհային ծրագրերում:

ԵՊՀ գիտակազմակերպական վարչության կողմից շարունակաբար կազմակերպվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար մրցույթներ: Հաշվետու ժամանակաշրջանում վարչության աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 5 արտոնագիր, որից 1-ը՝ ֆիզիկայի բնագավառում, 1-ը՝ երկրաբանության, 3-ը՝ քիմիայի: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված և իրականացված գիտական միջոցառումներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Սուպերսիմետրիան ինտեգրվող համակարգերում» միջազգային գիտաժողովը (ԵՊՀ, 09-13 սեպտեմբերի, 2015 թ.), «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ» VI միջազգային գիտաժողովը (Օադկաձոր, 12-19 սեպտեմբերի, 2015 թ.), «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» X միջազգային գիտաժողովը (ԵՊՀ, 12-14 սեպտեմբերի, 2015 թ.), «Կարգավորված և չկարգավորված նյութերի վերլուծություն և բնութագրում DOMac-2015» միջազգային գիտաժողովը, (Երևան, 23-30 սեպտեմբերի, 2015 թ.), «Հոգեբանության կարգավիճակը. հումանիտար, սոցիալական, թե՛ բնագիտական» խորագրով գիտաժողովը (ԵՊՀ, 28 հոկտեմբերի, 2015 թ.): 2015/2016 ուստարում Գիտակազմակերպական վարչության կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

\* \* \*

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀԻ) հաշվետու շրջանում շարունակել է ակտիվ գործունեությունը գիտակրթական ոլորտում: 2013 թվականից հաջողությամբ իրականացված «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը շարունակում է համալրվել նոր ուսանողներով: Այն արդեն տվել է 11 շրջանա-

վարտ, իսկ 2015/2016 ուստարում ընդունվել է 14 ուսանող: Ինստիտուտը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հետ համատեղ շարունակում է իրականացնել «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում ներգրավված ուսանողների ուսման վարձը տրվում է Համազգային հայ կրթական և մշակութային միության կողմից: Ծրագրի նպատակն է Սփյուռքի հայկական կրթօջախների համար պատրաստել հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության ուսուցիչներ: «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրն ավարտել է 5 ուսանող, այժմ սովորում են 9-ը: Կրթական դաշտում հետզհետե տարածում գտնող հեռաուսուցման համակարգը ևս ինստիտուտի ուշադրության կենտրոնում է: Հաջողությամբ իրականացվում է ՀՀԻ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման եռամսյա ծրագիրը: Որպես հիմնական լսարան դիտարկելով Սփյուռքը՝ 2016 թվականի դրությամբ հեռաուսուցման ծրագիրն անցել է 10 ուսանող Լիբանանից: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում ուսանողների թիվն ու աշխարհագրությունը ընդլայնելու, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելու և գոյություն ունեցող ծրագիրը հայերենից մի շարք օտար լեզուների վերածելու ուղղությամբ:

Ինստիտուտը 2015/2016 ուստարվա ընթացքում հրատարակել է 12 մենագրություն, 84 գիտական հոդված, 5 գեկուցումների թեզիս և 3 քարտեզ: Զուգահեռ արդեն հրատարակության են ներկայացվել մենագրություններ և հոդվածներ: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային՝ հայագիտական ուղղվածության բազմաթիվ գիտաժողովների, կլոր սեղանների:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել են ինստիտուտի հայագիտական կայքերը. [armin.am](http://armin.am) և 7 թեմատիկ՝ [armenianarchaeology.am](http://armenianarchaeology.am), [armeniaculture.am](http://armeniaculture.am), [armeniandiaspora.am](http://armeniandiaspora.am), [historyofarmenia.am](http://historyofarmenia.am), [armenianlanguage.am](http://armenianlanguage.am), [armeniansgenocide.am](http://armeniansgenocide.am), [armenianreligion.am](http://armenianreligion.am) կայքերում տեղադրվել են շուրջ 180 գիրք, 150 գիտական հոդված, 680 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 230 արխիվային փաստաթուղթ: Համալրվել են նաև որպես օժանդակ միջոց ծառայող լուսանկարները (624) և տեսանյութերը (65):

Հաշվետու ժամանակահատվածում Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնին կից շարունակել է իրակա-

նացնել «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն տարբերակի խմբագրությունը (<http://am.hayazg.info>):

Փոխձանաչելիության և փոխգործակցության նպատակով՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գործակցությամբ 2016 թ. օգոստոսի 25-26-ը կազմակերպեցին «Հայկական աշխարհը համացանցում» խորագիրը կրող գիտագործնական միջազգային գիտաժողովը՝ հետևյալ թեմատիկ ուղղություններով.

1. ««Հայկական աշխարհը» համացանցի գիտակրթական հարթակում»,
2. «Տեղեկատվական անվտանգության մարտահրավերները համացանցում»,
3. «Սփյուռքը համացանցային հարթակում»

\* \* \*

Երիտասարդ գիտական կադրերի խնդիրը միշտ եղել և մնում է ԵՊՀ ուշադրության կենտրոնում: Այդ տեսակետից կարևորվում է ասպիրանտական ուսումնառությունը Համալսարանում, որն իրականացվում է կրեդիտային համակարգով, առկա և հեռակա ձևերով:

2016 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ԵՊՀ ասպիրանտուրայում առկա ուսուցմամբ սովորում են 108, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 288 ասպիրանտ, որից 6-ը՝ վճարովի հիմունքով, ձևակերպված է 82 հայցորդ:

2016 թ. հունվարին ՀՀ ԿԳՆ է ներկայացվել ԵՊՀ ասպիրանտուրայի առկա ուսուցմամբ տեղերի հայտը: Ստացված 36 տեղի համար ընդունվել է 36 ասպիրանտ 29 մասնագիտությամբ: Նույն տարում ավարտել է 37 ասպիրանտ՝ 27 մասնագիտությամբ, որից 25-ը՝ աստենախոսությունը պաշտպանելով: Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ստացված 85 տեղի համար ընդունվել է 63 ասպիրանտ: Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրան ավարտում են 79 ասպիրանտ, որից 15-ը՝ պաշտպանությամբ: Երկու կիսամյակների շրջանակներում կրեդիտային համակարգով կազմակերպվել են դասընթացներ 9 առարկաներից, այդ թվում՝ 5-ը պարտադիր, 4-ը ընտրովի: Յուրաքանչյուր տարվա ընթացքում կազմակերպվող քննաշրջաններում անց են կացվում որակավորման քննություններ: Գարնանային քննաշրջանի ընթացքում քննություններ են հանձնել 140 ասպիրանտ և հայցորդ՝ 59 մասնագիտությամբ: Ստեղծվել է ասպիրանտների էլեկտրոնային բազա՝ բոլոր անհրաժեշտ տվյալներով:

Տարեկան 2 անգամ (հունվար և սեպտեմբեր ամիսներին) կազմակերպվում է հայցորդների ձևակերպում: 2016 թ. հունվարին հայցորդ է ձևակերպվել 17 մասնագետ՝ 16 մասնագիտությամբ: Կազմվել և ՀՀ ԿԳՆ են ուղարկվել ասպիրանտուրայի ընդունելության և օտար լեզուներից՝ անգլերեն (TOEFL), ֆրանսերեն (TCF), գերմաներեն (On Daf), ինչպես նաև ինֆորմատիկա առարկաներից անվճար հիմունքներով դասընթացների մասնակցելու և ընդունելության քննությունները հանձնելու համար հայտերը: Ասպիրանտուրայի բաժնում ամենօրյա աշխատանքներ են տարվում ասպիրանտների, հայցորդների և դիմորդների հետ՝ դասընթացների կազմակերպում, խորհրդատվություն, որակավորման քննությունների և այլ տեղեկանքների տպագրում, անհատական պլանի լրացում, արձակուրդների տրամադրում, գիտական ղեկավարության իրավունք ստանալու համար գրությունների պատրաստում և այլն:

\* \* \*

Չնայած ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ոլորտում վերոհիշյալ ձեռքբերումներին և հաջողություններին՝ անցած ուստարում եղել են նաև որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝

- Չնայած ներգրաված միջոցներին՝ որոշ գիտական լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունը դեռևս չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:
- Ստացված գիտահետազոտական արդյունքները, որոնք երբեմն ունենում են կիրառական նշանակություն, չեն վերածվում ներդրման պատրաստ տեխնոլոգիաների:
- Գիտության ոլորտում աշխատավարձերի ցածր մակարդակի պատճառով հնարավոր չի լինում հեռանկարային երիտասարդ մասնագետներին պահել Համալսարանում:
- Թեև հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված դասախոսների և ուսանողների թիվն աճել է, սակայն ընդհանուր առմամբ այդ ցուցանիշը միջինում գրեթե նույն է մնում: Բացի դրանից՝ ցածր է գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրոսների ընդգրկվածությունը:

## ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Արդի համալսարանական կրթության որակի երաշխավորներից մեկը բազմաշերտ տեղեկատվության առկայությունն է, որի ապահովման առաջնահերթությունը վերապահված է գրադարանին: Մա այն օղակն է, որն ընթերցողին հնարավորություն է տալիս ոչ միայն ճիշտ կողմնորոշվելու մեր օրերում արդեն հսկայական ծավալների հասնող տեղեկատվական հորձանուտում, այլ նաև կատարելու ուսումնական ծրագրերի և գիտական հետազոտությունների պահանջներին ներդաշնակ ընտրություն՝ զուգահեռաբար օգտվելով տեղեկույթի հաղորդման թե՛ ավանդական, թե՛ նոր ձևերից՝ թղթայինից ու էլեկտրոնայինից:

Գրադարանի հարստության չափանիշը ոչ միայն գրքային ունեցվածքի քանակն է, այլև դրա բովանդակային հարստությունը: Այս առումով Համալսարանի գրադարանը շարունակում է մնալ առաջնային դիրքերում, քանի որ իր գրապաշարով (ավելի քան 2 մլն) հանրապետությունում երրորդն է, բուհական գրադարաններից՝ առաջինը և ստեղծման օրից շարունակաբար համալրվում է գիտական, ուսումնական ու գեղարվեստական բազմալեզու գրականությամբ: Համալրման աղբյուրները բազմազան են՝ համալսարանական հատկացումներ, դրամական փոխանցումներ, միջազգային գրափոխանակություն, արտերկրի մի շարք գրադարանների և կազմակերպությունների գրքային և դրամական օժանդակություններ, նվիրատվություններ և այլն:

Համալրման գործընթացը հաշվետու շրջանում ընթացել է համալսարանական գրադարանի համար սահմանված չափանիշներով, սակայն, այդուհանդերձ, թղթային պաշարները գնալով նվազում են՝ իրենց տեղը զիջելով էլեկտրոնային տարբերակներին: Պետք է նկատել, որ թեև հաշվետու շրջանում գրադարանային ֆոնդեր է մուտք գործել գիտական, ուսումնական և գեղարվեստական 1463 անուն 17751 միավոր հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով գրականություն, սակայն կրթական համակարգի հարաճուն պահանջներին համապատասխան տպագիր նյութի քանակություն ապահովելն օրեցօր դժվարանում է: Ուստի մեծապես կարևորվում է Համալսարանի էլեկտրոնային գրադարանի շարունակական հարստացումը դասագրքերի և ուսումնական ձեռնարկների թվային տարբերակներով, որոնք կարող են զգալիորեն նվազեցնել հազ-



վագյուտ և մեկօրինակ գրքերի պակասուրդը: Հաշվետու շրջանում գրադարանի կայքը համալրվել է 452 գրքի էլեկտրոնային տարբերակներով:

Գրադարանավարի մասնագիտությունը քաղաքակիրթ աշխարհում ամենահարգվածներից է. այն պահանջում է ոչ միայն աշխատանքային հմտություններ, այլ նաև ընթերցողական տարբեր շրջանակների բավարարելուն ուղղված այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արդի տեղեկատվական դաշտից քաջատեղյակությունը և սպասարկման բարձր մշակույթը: Համալսարանի գրադարանի 6 բաժիններում ընթացող աշխատանքներն այսօր արդեն միտված են հնարավորինս բավարարելու նշված պահանջները:

Հաշվետու շրջանում գրադարանի սպասարկման բաժնի 5 ընթերցասրահներում գրանցվել են 317562 հաճախում, 912473 գրքատացք: Տեղին է նշել, որ գրադարանային աշխատանքում թերևս միայն սպասարկումն է, որ արժանանում է դրական կամ բացասական գնահատականի: Մինչդեռ այդ գործի շատ այլ աշխատափուլեր հանրության համար մնում են ոչ տեսանելի, ուրեմն և չգնահատված: Դրանցից են՝ նոր ստացված գրականության հաշվառում և մատենագրում, գիտական դասակարգում և դարակավորում, սպասարկման, մուտքագրման, թվայնացման կամ այլ նպատակով տեղահանված գրականության վերադասավորում, ֆոնդերի վերաձևավորում, գրքերի մաքրում, կազմում, վերանորոգում, պակասող էջերի լրացում, մուտքագրված գրականության թղթային քարտերի ձևավորում և քարտարանների վերադասավորում, աշխատափուլերի ավտոմատացում, էլեկտրոնային պաշարների հարստացում մատենագիտական գրառումներով ու գրականության թվայնացված տարբերակներով, մատենագիտական ցանկերի կազմում ու հրատարակում և այլն: Այս աշխատատար գործընթացները գրադարանային գործն առաջ տանող կարևոր փուլեր են, որոնցից ցանկացածի խաթարումը կարող է խափանել ողջ համակարգի գործունեությունը:

Համալսարանական գրադարանի գերխնդիրն այսօր տեղեկատվական հասարակության արդի պահանջները բավարարելն է, համաշխարհային տեղեկատվական տարածքում ինտեգրվելը, որն ապահովելու միակ ուղին զարգացած տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով տեղեկույթի կրիչներն առավել մատչելի դարձնելն է: Այս առումով առանձնակի գնահատման պետք է արժանացնել հաշվետու շրջանում գրադարանի ավտոմատացման բաժնում կատարված աշխատանքները: Այստեղ վերջնականապես ավարտին են հասցվել ինչպես գրադարանի ողջ գրապա-

շարի, այնպես էլ ընթերցողական բազայի տվյալների և գրքատացքի անհատական ցուցանիշների՝ «ԱԼԵՖ» համակարգից «ԿՕՀԱ» տեղափոխման մեծածավալ աշխատանքները: Լուսապատճենահանվել, մշակվել և գրադարանի կայքէջում տեղադրվել է 452 գիրք, պատվիրված էլեկտրոնային հոդվածներ են սպասարկվել Ֆրեզնոյի համալսարանի շտեմարաններից (մոտ 3000) և «SUBITO» գերմանական ծառայությունից (շուրջ 251), էլեկտրոնային բազայում մուտքագրվել է 5248 ընթերցողական տվյալ, պատրաստվել՝ 4022 միասնական ընթերցողական տոմս:

# ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## ԵՊՀ հրատարակչություն

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է 118 անուն գիրք՝ շուրջ 15000 տպաքանակով, ավելի քան 1500 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով: ԵՊՀ հրատարակչության աշխատանքներն ընթացել են հետևյալ հիմնական ուղղություններով՝ ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականության իրականացում, ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի բնականոն աշխատանքների կազմակերպում, գրքերի հրատարակչական և տպագրական աշխատանքներ, էլեկտրոնային գրքերի ստեղծում: Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ և ակադեմիական այլ գրականություն: Ուշադրության են արժանի հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի, ինչպես նաև Հայաստանի անկախության 25-ամյակի կապակցությամբ հրատարակված գրքերը:

Ավարտին հասավ հայտնի պատմաբան, հայագետ Նիկողայոս Ադոնցի «Երկերի» ութհատորյակի լիակատար հրատարակությունը: Շուրջ քառասուն տարվա ընդմիջումից հետո վերահրատարակվեցին Համալսարանի հիմնադիր դասախոս, հայտնի բանասեր Մանուկ Աբեղյանի «Երկերի» 8 հատորները, ինչպես նաև հայտնի լեզվաբան Գևորգ Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» բացառիկ աշխատության երկհատորյակը: Դրանցում ընդգրկված աշխատությունները մեծ կարևորություն ունեն հատկապես հայագիտական ուղղվածությամբ ֆակուլտետների ուսանողների և դասախոսների համար: Բացառիկ է նաև Ավետիք Իսահակյանի՝ տարբեր տարիներին պարբերական մամուլում լույս տեսած, ինչպես նաև բազմաթիվ անտիպ նամակների մեկ ընդհանուր գրքով լույսընծայումը: Հատկանշական է և այն, որ դրանք երբևէ ընդգրկված չեն եղել Իսահակյանի երկերի որևէ հրատարակության մեջ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ հրատարակությունների շրջանակներում կարևոր նշանակություն ունեցան Ռոմանազերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սեդա Գասպարյանի, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբոնի վարիչ, պրոֆեսոր Շուշանիկ Պարոնյանի, նույն ամբիոնի պրոֆեսոր Աստղիկ Չուբարյանի և դոցենտ Գայանե Մուրադյանի «Ցեղասպանության կոնվենցիայի Ռաֆայել

Լեմկինի նախագիծը և 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան» աշխատությունը, Հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սամվել Մուրադյանի «Հովհաննես Շիրազ, Բանաստեղծը, Մարդը» մենագրության 2-րդ հատորը, «Հայոց եղեռնապատումի պոեզիա» (կազմող՝ պրոֆեսոր Արծրուն Ավագյան) և այլ աշխատանքներ: Իր տեսակի մեջ առանձնահատուկ էին նաև Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս Լուսինե Պետրոսյանի «Հայերեն-պարսկերեն քաղաքագիտական-դիվանագիտական բառարանը», ինչպես նաև Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող Վլադիմիր Մաղալյանի «Սերգեյ Եսենինի վաղ շրջանի բանաստեղծությունները» հայերեն թարգմանության լույսընծայումը:

Ծավալուն աշխատանք է տարվել նոր դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծման, ինչպես նաև մի շարք արժեքավորների վերահրատարակման ուղղությամբ: Առանձնահատուկ են «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» (հեղինակներ՝ Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Ն. Ներսիսյան, Լ. Թեյլան, Ա. Տեր-Մինասյան, Շ. Գևորգյան, Լ. Սարգսյան, Ա. Ադիլխանյան), «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» (հեղինակ՝ մանկ. գիտ. դոկտոր Էդվարդ Այվազյան), «Խնդիրների լուծում Prolog լեզվով» (հեղինակ՝ դոցենտ Արմեն Կոստանյան), «Ռադիոֆիզիկայի խնդիրների համակարգչային մոդելավորումը Matlab միջավայրում. Matlab միջավայրի կառուցվածքը» (հեղինակ՝ ֆիզմաթ գիտ. թեկնածու Տարոն Հարությունյան), «Սփյուռքահայ գրականություն» (հեղինակ՝ պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյան), «Հայ միջնադարյան գրականություն» (հեղինակ՝ բան. գիտ. դոկտոր Վազգեն Սաֆարյան) և այլ աշխատանքները: Կարևոր են նաև «Քրդերեն» ուսումնական ձեռնարկի հրատարակումը (հեղինակ՝ ԵՊՀ դասախոս Թերեզա Ամրյան), «Թուրքերեն» դասագրքի վերահրատարակումը (հեղինակ՝ պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյան): Պատրաստ են հրատարակման հայ իրականության մեջ առաջին «Օսմաներենի դասագիրքը», ինչպես նաև «Եզդիների կրոնական աշխարհընկալումը» հետազոտությունը:

ԵՊՀ հրատարակչությունն աշխատանքներ է իրականացրել նաև լույս ընծայվող գրքերի հանրայնացման ուղղությամբ: Պարբերաբար թարմացվել է հրատարակչության նոր կայքը՝ <http://publishing.yasu.am/>, որտեղ տեղադրվել են նախկին տարիներին կամ նոր լույս տեսած, ինչպես նաև շուտով լույս ընծայվելիք գրքերը: Հայերեն և անգլերեն հրատարակվել է լույս տեսած վերջին գրքերի կատալոգը, ֆակուլտետներում

կազմակերպվել են նոր լույս տեսած գրքերի շնորհանդեսները: ԵՊՀ հրատարակած գրքերը ցուցադրվել են Մոսկվայի, Լոնդոնի, Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառներում: Ֆրանկֆուրտում կայացած գրքի տոնավաճառին, որն աշխարհում ամենամեծն է, ներկայացված է եղել շուրջ 30 անուն գիրք Հայաստանի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին: ԵՊՀ հրատարակչությունը 2016 թվականի մարտից դարձել է Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի լիիրավ անդամ: Հաշվետու ուստարում ԵՊՀ հրատարակչությունում շարունակվել են հրատարակված գրքերի թվանշայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքները:

## **ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ**

Երևանի պետական համալսարանի գիտական երկու հանդեսները՝ «Բանբեր Երևանի համալսարանի»-ն և «Գիտական տեղեկագիր»-ը, շուտով կբոլորեն հրատարակության 50 տարին: Մոտ կես դար այս պարբերականները եղել են Համալսարանի ու համալսարանականների կողքին՝ յուրովի նպաստելով վերջիններիս գիտական գործունեության արդյունավետությանը:

### **«Բանբեր Երևանի համալսարանի»**

2015-2016 թթ. հաշվետու ժամանակաշրջանում 3-ական համարներով լույս են տեսել «Բանբեր Երևանի համալսարանի» հետևյալ առանձին հանդեսները՝

«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն»:

2015 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր լույս են տեսել հանդեսների այդ տարվա երրորդ համարները: 2016 թ. հունվարից մինչև սեպտեմբեր հրատարակվել են առաջին և երկրորդ համարները, յուրաքանչյուրը՝ 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով, բացառությամբ «Բանբեր երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսի, որը լույս է տեսնում 120 օրինակով:

«Բանբերում» հայերենից և ռուսերենից բացի՝ հոդվածներ են տպագրվում նաև անգլերեն, ռուսի յուրաքանչյուր հոդված ունենում է երկու լեզվով ամփոփում:

Հանդեսների հրատարակությանը զուգահեռ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ԵՊՀ կայքում դրանց էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները: Ներկա պահին կայքում տեղադրված են 1991-2016 թթ. լույս տեսած բոլոր համարները:

«Բանբերը» շարունակում է համագործակցել ռուսաստանյան «Էլեկտրոնային գիտական գրադարան» ՄՊԸ-ի հետ՝ փոխանակելով տեղեկատվություն:

### **«Գիտական տեղեկագիր»**

1967 թ-ից հրատարակվող «Գիտական տեղեկագիր» հանդեսի «Բնական գիտություններ» սերիան 2009 թ-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տրոհվել և հրատարակվում է մասնագիտական 3 հանդեսների տեսքով:

2015 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել «Գիտական տեղեկագրի» (Proceedings of the YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» և «Քիմիա, կենսաբանություն» հանդեսների (անգլերեն), ինչպես նաև «Երկրաբանություն և աշխարհագրություն» հանդեսի (հայերեն, ռուսերեն) 3-րդ համարները:

2016 թ. արդեն լույս են տեսել նշված 3 հանդեսների 1-ին և 2-րդ համարները:

Ի հավելումն 2014 թ. մայիսից «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» շարքի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրատարակվող Zentralblatt MATH (էլեկտրոնային հասցեն՝ [www.zbmath.org](http://www.zbmath.org)) ռեֆերատիվ, էլեկտրոնային պարբերականում ներկայացման՝ 2016 թ-ից նույն շարքը ամբողջովին (2009-2016 թթ. հանդեսում հրապարակված բոլոր հոդվածները) ներկայացված է ՌԴ ԳԱ Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի Mathnet.ru էլեկտրոնային ռեֆերատիվ ամսագրում (էլեկտրոնային հասցեն՝

[www.mathnet.ru](http://www.mathnet.ru)): Խմբագրությունը պլանավորում է նման միջազգային համագործակցությունը ընդլայնել մոտ ապագայում:

Հանդեսի հրապարակման աշխատանքներին զուգահեռ շարունակվում են դրա արխիվի թվայնացումը և ԵՊՀ կայքում ամբողջական հոդվածների (բնագրի լեզվով) և երկլեզու բովանդակության (հայերեն և անգլերեն) զետեղումը: 2016 թ. կավարտվեն 1991–2016 թթ. համարների թվայնացման աշխատանքները:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղություններից է Համալսարանի միջազգայնացումը: Ծրագրում որպես խնդիր դրվում է բուհի միջազգայնացմանը նպաստող քաղաքականության զարգացումը:

ԵՊՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 271 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Հաշվետու ուստարում առավել ակտիվ շարունակվել է համագործակցությունը ԱՄՆ Արիզոնայի, Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգի պետական, Քուվեյթի, Եգիպտոսի Կահիրեի, Ֆրանսիայի Պրովանսի, Մոնպելյե-1, Մոնպելյե-3 համալսարանների հետ: Ի դեպ, 2016 թ. լրացավ Մոնպելյե-3 համալսարանի հետ համագործակցության 30 տարին: Հոբելյանը նշելու համար 2016 թ. մայիսի 17-21-ը Երևանում էր Մոնպելյեի համալսարանի պատվիրակությունը՝ պրոռեկտոր Մարի-Անն Մոթարի գլխավորությամբ: Մայիսի 19-ին մեկնարկել է ԵՊՀ-ի և Մոնպելյեի համալսարանի համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովը:

ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում 2015/2016 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարան են գործուղվել ուսանողներ ԵՊՀ միջազգային հարաբերությունների, ռուս բանասիրության ֆակուլտետներից:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 15 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, որոնց թվում են՝ Ազգային հետազոտական միջուկային համալսարանը, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանը (ՌԴ), Լոձի համալսարանը (Լեհաստան), Վիլնյուսի համալսարանը (Լիտվա), Օդեսայի ազգային պոլիտեխնիկ համալսարանը (Ուկրաինա), Տաջիկստանի ազգային համալսարանը (Տաջիկստան), Դեկարտի համալսարանը, Ավինյոնի համալսարանը (Ֆրանսիա), Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի անվան համալսարանը (Գերմանիա), Զժեցյանի միջազգային հետազոտությունների համալսարանը (Չինաստան), Ինդոնեզիայի համալսարանը (Ինդոնեզիա): Վերակնքվել են Բաթումիի Շ. Ռուսթավելու անվան պետական համալսարանի (Վրաստան), Կոննեկտիկուտի համալսարանի



(ԱՄՆ), Կիպրոսի համալսարանի (Կիպրոս), Կահիրեի համալսարանի (Եգիպտոս) հետ ստորագրված պայմանագրերը:

Ինչպես նախորդ տարիներին, 2015/2016 ուստարում ԵՊՀ-ն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միննույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

2015/2016 ուսումնական տարվա միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ են 2016 թ. փետրվարի 18-ին կազմակերպված «Հայաստանի Հանրապետություն-Իրանի Իսլամական Հանրապետություն. համագործակցության 25 տարին» խորագրով միջազգային գիտաժողովը, 2016 թ. մայիսի 19-ին Մոնպելյեի համալսարանի հետ համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովը, 2016 թ. մայիսի 26-ին «Պարսից գրականություն և պատմություն» խորագրով միջազգային գիտաժողովը, որի շրջանակում ԵՊՀ-ում հյուրընկալվել են Իրանի, Տաջիկստանի, Վրաստանի, Ղազախստանի, Գերմանիայի արևելագետները:

Միջազգային մի շարք օլիմպիադաների, ծրագրերի և մրցույթների ակտիվորեն մասնակցել են նաև ուսանողները: Ուրախալի է այն փաստը, որ նրանցից շատերը լուրջ հաջողություններ են գրանցել՝ միջազգային հարթակներում բարձր պահելով ԵՊՀ վարկանիշը: Մասնավորապես՝ ԵՊՀ ծրագրավորող ուսանողները մասնակցել են 2015 թ. դեկտեմբերի 5-6-ը Թբիլիսիում տեղի ունեցած «ACM-ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի կիսաեզրափակչին և տարածաշրջանում ճանաչվել լավագույնները: Պայքարն ընթացել է ինչպես անհատական, այնպես էլ թիմային կարգով: Հարավային Կովկասի երկրների մասնակից թիմերից լավագույն արդյունքները գրանցել է ԵՊՀ-ի առաջին թիմը՝ զբաղեցնելով 33-րդ տեղը: Իսկ անհատական մրցույթում 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցրել են ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողներ Ալբերտ Սահակյանը և Հրայր Հարությունյանը:

Մեր ուսանողները հրաշալի արդյունքներ են գրանցել նաև 2016 թ. հուլիսի 25-31-ը Բուլղարիայում տեղի ունեցած 23-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայում (IMC), որին մասնակցել են ավելի քան 320 մասնակիցներ

աշխարհի 72 համալսարաններից: Հայաստանը ներկայացրել են ԵՊՀ, Հայաստանի ամերիկյան և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանների թիմերը: Հայ ուսանողները նվաճել են 7 մեդալ, որոնցից 4-ը վաստակել են ԵՊՀ ուսանողները: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Սահակյանն ու Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Ալբերտ Գևորգյանն արժանացել են ոսկե մեդալի, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողներ Վազգեն Միքայելյանը և Ավետիք Կարագուլյանը՝ համապատասխանաբար արծաթե և բրոնզե մեդալի: Իսկ թիմային արդյունքներով ԵՊՀ-ի թիմը գրավել է 15-րդ հորիզոնականը: Միջազգային ուսանողական օլիմպիադայի հայաստանյան թիմը ղեկավարել է ԵՊՀ դասախոս Կարեն Քեոյանը:

Վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ-ն ակտիվորեն մասնակցել է TEMPUS-ի շրջանակներում իրականացվող նախագծերի մշակմանն ու իրականացմանը:

2015/2016 ուստարում հաջողությամբ շարունակվել են TEMPUS, ERASMUS MUNDUS դրամաշնորհային ծրագրերը, մասնավորապես՝ TEMPUS ծրագրի PICASA, La MANCHE, ATHENA, SuTomA, ARMENQA, PACT, VERITAS նախագծերը, ERASMUS MUNDUS ծրագրի WEBB, ELECTRA, HUMERIA, BACKIS, EMBER նախագծերը, որոնց նպատակն է ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունակությանը ոչ ԵՄ անդամ պետություններից դեպի ԵՄ անդամ երկրներ: Ի դեպ, PICASA ծրագրի շրջանակում ԵՊՀ մասնագետները վերապատրաստման դասընթացներ են անցկացրել Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի՝ ծրագրում ընդգրկված համալսարանների միջազգայնացման համար պատասխանատուների հետ: Դասընթացները նպաստել են այդ բուհերում միջազգայնացման ռազմավարությունների մշակմանը և աստիճանաբար ներդրմանը:

Հաշվետու ուստարում մեկնարկել է ERASMUS+ դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում համագործակցության պայմանագրեր են ստորագրվել Լիլի, Մոնպելյե-3, Էքս ան Պրովանսի (Ֆրանսիա), Մասաչիկի (Չեխիա), Պավիայի, Լ'Օրիենտալե, Կա Ֆոսկարի, Բոլոնիայի (Իտալիա), Գրանադայի, Վալենսիայի (Իսպանիա), Լյովենի, Հասսելթի (Բելգիա), Յագելլոնիայի (Լեհաստան), Սարվանդի (Գերմանիա), Յասիի (Ռումինիա), Տեխնոլոգիայի Սիլեսյան (Լեհաստան), Ջալցբուրգի (Ավստրիա), Տարտուի (Էստոնիա), Վառնայի մենեջմենթի (Բուլղարիա), Մինհոյի (Պորտուգալիա), Միջինարևելյան տեխնիկական (Թուրքիա) համալսարանների հետ:

ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Մեր համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Գերմանիա, Վրաստան, Իտալիա, Ֆրանսիա:

2015/2016 ուսումնական տարում իրականացվել է 616 անձ/գործուղում. գործուղվել են 234 մասնագետ, 175 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 207 անձ:

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ում սովորել են 360 օտարերկրացի ուսանող և ասպիրանտ, այդ թվում՝ 32 ուսանող ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում, 229-ը՝ բակալավրիատում (207-ը՝ վճարովի, 22-ը՝ անվճար հիմունքներով), 34-ը՝ մագիստրատուրայում (20-ը՝ վճարովի, 14-ը՝ անվճար հիմունքներով), 19-ը՝ ասպիրանտուրայում՝ (15-ը՝ վճարովի, 4-ը՝ անվճար հիմունքներով), հեռակա ուսուցմամբ՝ 39 ուսանող (28-ը՝ բակալավրիատում, 11-ը՝ մագիստրատուրայում) և 7 ստաժոր:

2015/2016 ուստարում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են ԵՊՀ երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը: Միաժամանակ, «Գ. Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ կողմից փոխհատուցվել է ԵՊՀ-ում սովորող 32 սիրիահայ ուսանողի ուսման վարձերի 70 %-ը: Հիմնադրամի կողմից Համալսարանին է տրամադրվել 13.200 ԱՄՆ դոլար՝ «Հայկական սփյուռքը Ռուսաստանի Դաշնությունում» գիտաժողովն անցկացնելու նպատակով:

«Վարդանանց ասպետներ» միության (ԱՄՆ) կողմից 12 ուսանողի տրամադրվել է միանվագ անվանական կրթաթոշակ՝ 3000 ԱՄՆ դոլարի չափով:

Կազմակերպվել է լույս տեսնող և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամին (Լիսաբոն)՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: 2015/2016 ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 120 կտոր գրականություն:

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

## 1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

Հասարակայնության հետ տարվող աշխատանքները մեկ տասնամյակ շարունակ համարվում են ԵՊՀ զարգացման ռազմավարական գերակա ուղղություններից:

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանացել Հայաստանի Հանրապետության 25-ամյակին նվիրված ծրագրերը և միջոցառումները: Ինչպես նախորդ տասնամյակի ընթացքում, այնպես էլ հաշվետու ուստարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը հայաստանյան ՁԼՄ-ների հետ: Անխախտ պարբերականությամբ տպագրվել է «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը և անվճար բաժանվել ԵՊՀ աշխատողներին, ուսանողներին և բուհի հետ համագործակցող կազմակերպություններին: Համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ինտերնետային ռեսուրսների զարգացման, ինչպես նաև համապատասխան ոլորտում աշխատանքների իրականացմանը:

Աշխատանքներ են կատարվել Համալսարանի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ՝ համապատասխան ուղեցույցների մշակման և այլ աշխատանքների միջոցով:

ԵՊՀ-ին վերաբերող, հանրային նշանակություն ունեցող, լայն տարածման ենթակա նյութերի (գրքույկներ, բուկլետներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, օրացույցներ և այլն), ինչպես նաև էլեկտրոնային նյութերի (ինտերնետային կայքեր, գովազդային խտասկավառակներ և այլն) պատրաստման հարցում Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումներին տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն ու աջակցություն: Մշտադիտարկման են ենթարկվել լրատվամիջոցներում ԵՊՀ-ի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը մշակել է ԵՊՀ հանրային կապերի և մարքեթինգային գործունեության հայեցակարգը, ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ հասարակայնության հետ կապերի պատասխանատուների գործունեության աշխատակարգը:

ԵՊՀ-ում կատարվող աշխատանքներին համահունչ մշակվել և ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը: Կազմվել և հրատարակման է նախապատրաստվել ԵՊՀ նախորդ ուստարվա հաշվետվությունը: Հաշվետու ժամանակահատվածում առավել համակարգված ու նպատակաուղղված են իրականացվել ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ տարվող աշխատանքները: Համալսարանում նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր:

Ապահովվել է տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ ԵՊՀ փոխգործակցությունը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրվել է տեղեկատվություն, Համալսարանն օպերատիվ արձագանքել է նրանց նախաձեռնություններին:

\* \* \*

ԵՊՀ-ում կազմակերպվող կարևորագույն միջոցառումները լուսաբանվել են հայաստանյան տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ներով: Իրադարձային միջոցառումների լուսաբանումից զատ՝ հաշվետու ժամանակահատվածում թեմատիկ նյութեր ևս հրատարակվել են, հատկապես հեռուստաընկերություններում պարբերաբար հյուրընկալվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուլքեր, որպես փորձագետներ, ներկայացրել են իրենց տեսակետները քննարկվող հարցերի շուրջ, առանձին դեպքում ներկայացվել է նաև ԵՊՀ դիրքորոշումը:

Նմանօրինակ աշխատանքներն իրականացվում են «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթներին համապատասխան: Հետևողական աշխատանք է տարվել ուղեցույցի դրույթների կիրառման ուղղությամբ: Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունն ստացել է հանրային նշանակության միջոցառման 329 հայտ: 56 մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՁԼՄ-ներին:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում և ինտերնետային կայքերում Համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրատարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոց-

ներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 735 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը 1025 է: Հայաստանյան հեռուստաընկերություններով ԵՊՀ-ի վերաբերյալ հեռարձակվել է 133 տեսանյութ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին, կիսամյակը մեկ անգամ իրականացվել է նյութերի վերլուծություն:

ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահների հեռուստակրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել Համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 329 է:

\* \* \*

ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են ավելի քան 90 կայք ու ենթակայք: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1362 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 382 հայտարարություն:

Մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական կայքի միջոցով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացվել են բազմաբնույթ նամակներ (1348՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն), որոնց, ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների մասնագիտական պարզաբանումներից հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ կրկնապատկվել է՝ հասնելով օրական միջինը 8030-ի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացել են մոտ 2376 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 21376 հրապարակում: «Google analytics» գործիքի տվյալների համաձայն՝ օրական այցելուների թիվը անցնում է 5100-ից: [www.y-su.am](http://www.y-su.am)-ի 35,4 % են կազմում նոր այցելուները: Ամենաշատ այցելուները Հայաս-

տանից են (91,77 %), այնուհետև Ռուսաստանից (1,94 %), ԱՄՆ-ից (1,11 %), Գերմանիայից (0,44 %) և այլն:

Կայքերի կարևորությունը (տվյալների հավաստի լինելը) ու տարածվածությունը որոշելու համար հաճախ օգտագործվում է Google PageRank-ը, որը չափվում է 0-10 վարկանշավորման սանդղակում: Google PageRank-ի տվյալների համաձայն՝ ԵՊՀ պաշտոնական կայքին տրվել է 7 միավոր, ինչը համարվում է բավականին լավ արդյունք: Համեմատության կարգով նշենք, որ Հայաստանի մի շարք առաջատար լրատվական գործակալություններ ունեն 6-րդ և ավելի ցածր կարգեր:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժինները.

- Բառարաններ (<http://dictionary.y-su.am/>),
- ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ (<http://intranet.y-su.am/>),
- ԵՊՀ գիտական տեղեկագիր, սերիա ֆիզիկամաթեմատիկական գիտություններ (<http://physmath-journal.y-su.am/hy//>),
- ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն (<http://extension.y-su.am/>):

Փոփոխության են ենթարկվել հետևյալ բաժինները՝ «Առաջին կուրսեցու ուղեցույց», «ԵՊՀ կառուցվածք», «Հարց-պատասխան», «Օրացույց», «Համալսարանականներ»: Ամբողջությամբ վերափոխվել է «Փաստաթղթեր» կայքը, և խմբագրվել նրա պարունակությունը: Փոփոխվել և խմբագրվել են նաև «Ֆակուլտետներ» կայքում մուտքագրված պրոֆեսորադասախոսական կազմի անհատական էջերի անվանական հասցեները:

Սոցիալական ցանցերում ակտիվորեն գործարկվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ «Facebook»-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել, ԵՊՀ «Facebook»-ի էջի հետևորդների թիվը հասել է 35000-ին: «Facebook» տիրույթում վերջին տարվա ընթացքում ամենաշատ ընթերցվածը եղել է առաջին անհրաժեշտության իրեր և պահածոյացված սննդամթերք Արցախի սահմանամերձ համայնքներ ուղարկելու համար նախատեսված միջոցառումների մասին նյութը: Այն ունեցել է շուրջ 199207 դիտում:

2016 թ. հունվարից սկսվել է «twitter.com/YSU\_official» սոցիալական կայքի վարումը: Ներկայումս հետևորդների թիվը 48-ն է: Մուտքագրվել են շուրջ 250 նորություններ (միայն անգլերենով):

«issuu.com/ysu.am» կայքում 2016 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 101 էլեկտրոնային հրապարակում է մուտքագրված (ԵՊՀ պաշտոնաթերթերը, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հրապարակումները, տարբեր տարեթվերի ԵՊՀ բուկլետները, ԵՊՀ 90-ամյակի ֆոտոալբոմը և այլն): Այս տիրույթում ԵՊՀ հրապարակումներին հետևում են Հայաստանից, Ավստրալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Հոլանդիայից և այլն:

ԵՊՀ-ի «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 26 տեսանյութ: Ընդհանուր մուտքագրված տեսանյութերի թիվը հասնում է 165-ի:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր տեղադրվել են օրական երկու անգամ օպերատիվ կերպով: Տեղադրվել են նաև 2016 թ. առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունվածների ցուցակները: Էլեկտրոնային տարբերակով տեղադրվել է 2015/2016 ուստարվա առկա ուսուցման համակարգ ընդունված դիմորդների շարժը՝ ըստ օրերի: Իրականացված աշխատանքների արդյունքում էապես ավելացել է այցելուների թիվը ինչպես ԵՊՀ պորտալում, այնպես էլ ԵՊՀ Facebook-յան էջում:

«Վեբոմետրիքս» (Webometrics Ranking of World Unisvesuties) կայքի՝ բուհերի վարկանշավորման սանդղակում ԵՊՀ-ն ամրապնդել է դիրքերը՝ նախորդ տարվա համեմատ առաջընթաց գրանցելով 211 նիշով: 2016 թվականի հուլիսին «Վեբոմետրիքսի» հրապարակած բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակում ԵՊՀ-ն 2299-րդ տեղում է: Մայր բուհը միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը:

\* \* \*

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետ (անգլերեն) ու տեղեկատվական գրքույկներ:



2015/2016 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 47-57 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 470-570 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանում և այլն): ԵՊՀ պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»: Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:

\* \* \*

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել են հետազոտություններ՝ ուղղված ինչպես արտաքին իմիջի ուսումնասիրմանը, այնպես էլ Համալսարանի ներքին շահառուների տեղեկացվածության մակարդակի գնահատմանը: Իրականացվել է ԵՊՀ-ին 2015 թ. անդրադարձած թերթերի, թերթերում առկա հոդվածների վերլուծություն: Վերջիններս ի սկզբանե առանձնացվել են իրականացվող ամենօրյա մամուլի մոնիթորինգի արդյունքում: Հետազոտության ընթացքում օգտագործվել են կոնտենտ և բովանդակային վերլուծության մեթոդները:

Վերլուծության են ենթարկվել վիրտուալ հարթակում ԵՊՀ-ի ներգրավվածությունն ու ակտիվությունը: Ուսումնասիրվել է ԵՊՀ պաշտոնական էջի «Հարց-պատասխան» բաժինը, որը արտաքին լսարանի հետ հետադարձ կապի ապահովման միջոցներից է: Ուսումնասիրվել են նաև ԵՊՀ-ի Facebook-ի, Twitter-ի, LinkedIn-ի և Youtube-ի պաշտոնական էջերի այցելությունների դինամիկան, տրվող հարցերի քանակը:

Ուսումնասիրվել է ներքին հաղորդակցության արդյունավետությունը՝ կապված, մասնավորապես ամենօրյա մոնիթորինգների արդյունքների տարածման հետ: Վերջինիս գնահատման համար կիսաստանդարտացված հարցաթերթիկների միջոցով հարցումներ են իրականացվել ԵՊՀ վարչական ստորաբաժանումների ղեկավարների և ղեկանների հետ, որոնք հանդիսանում են համակարգի օգտատերերը:

Անցկացվել են մի շարք որակական թեմատիկ հետազոտություններ ԵՊՀ ուսանողների (ընտանիք կազմած ուսանողների, առաջին կուրսեցիների) շրջանում՝ ուսա-

նողությանը հուզող խնդիրները վերհանելու և դրանցից ԵՊՀ իմիջի վրա ազդող գործոններն առանձնացնելու նպատակով:

\* \* \*

Հաշվետու ուստարում կատարվել է 394 լուսանկարահանում (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 33679 լուսանկար: Շարունակվել են տեսանյութերի և լուսանկարների թվայնացման և արխիվացման աշխատանքները: Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

## **2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում**

2015/2016 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման ուղղությամբ, որոնք պայմանականորեն բաժանվում են հետևյալ հիմնական մասերի՝

- Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառնությունների իրականացում,
- Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,
- Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում:

\* \* \*

Տեղեկատվական համակարգերի և համակարգչային տեխնիկայի ոլորտում համապատասխան վարչական գործառնություններն իրականացվել են ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից: Արդիականացվել և սպասարկվել են գույքի էլեկտրոնային գույքագրման, վարչական գործառնությունների ավտոմատացման համակարգերը:

Սպասարկվել է (տեխնիկական սպասարկում, կարգաբերում, պրոֆիլակտիկա) շուրջ 500 համակարգիչ:

Ավելացել են պետական և ավարտական քննությունների ընդունման լսարաններում տեղադրված IP տեսախցիկները (4 նոր տեսախցիկ), ինչպես նաև միջոցառումներ են իրականացվել բոլոր տեսախցիկների (65 տեսախցիկ) ձայնի գրանցման որակը բարձրացնելու ուղղությամբ, որոնց միջոցով բոլոր ֆակուլտետներում ապահովվել են քննությունների ողջ ընթացքի տեսահեռարձակումը ԵՊՀ ներքին ցանցում և սահմանված կարգով քննությունների տեսաձայնագրումը:

ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն (շուրջ 1600 այցելություն և խորհրդատվություն), տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

\* \* \*

Իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ իր չափերով և տեխնիկական հագեցվածությամբ ու համապատասխան որակական բնութագրիչներով Հայաստանի բուհական համակարգում եզակի ԵՊՀ ներքին համակարգչային ցանցի անխափան շահագործման ուղղությամբ: Մասնավորապես՝ ապահովվել են ԵՊՀ մասնաշենքերի միջև ստեղծված 1 Գբիթ/վ արագությամբ գործող օպտիկամալուխային ցանցի անխափան աշխատանքները, որի միջոցով միմյանց հետ միացված են ԵՊՀ բոլոր ուսումնական մասնաշենքերը՝ ներառյալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռք բերված, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 110 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով ընդլայնվել է մասնաշենքերի ներքին համակարգչային ցանցը: ԵՊՀ ներքին ցանցին լարանցմամբ միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է 2660-ի, իսկ անլար ինտերնետ կապինը (WiFi)՝ 100-ի: Ապահովվել է ԵՊՀ-ում ինտերնետային կապի կայուն թողունակությունը, և միջինը կազմել է 60 Mb/s (մշտական օգտվողների թիվը հասնում է շուրջ 2400-ի):

ԵՊՀ թիվ 6-րդ ուսումնական մասնաշենքում (Աբովյան 52) ընդլայնվել է մասնաշենքը սպասարկող հեռախոսակայանը (համարների թվաքանակը ավելացել է 30-ով),

միաժամանակ ապահովվել է ընդհանուր թվով շուրջ 719 ներքին (արտաքին) հեռախոսահամար ունեցող հեռախոսային համակարգի անխափան աշխատանքը:

\* \* \*

Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի [www.yasu.am](http://www.yasu.am) պորտալի շուրջ 96 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է շուրջ 1200 նոր էլեկտրոնային փոստի հասցե [ysu.am](mailto:ysu.am) դոմեյնում (աշխատողների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը շուրջ 3300 է):

Շարունակվել է ԵՊՀ ուսանողների էլփոստի հասցեների տրամադրման ընթացիկ գործընթացը, և հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական էլփոստի հասցեների թիվը (այդ թվում՝ նախորդ երկու տարիների շրջանավարտների պահպանվող հասցեները) կազմել է շուրջ 26140: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ֆակուլտետների դեկանատներն օգտվել են նորաստեղծ «ուսանող-դեկանատ» (uStaff v2.0) էլեկտրոնային կապի գործիքից, և դեկանատների կողմից ուսանողներին ուղարկվել է շուրջ 2000 էլեկտրոնային հաղորդագրություն:

Ներհամալսարանական տեղեկատվության արդյունավետ տարածման նպատակով ապահովվել է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի, թիվ 1, 4, 6 և 8 մասնաշենքերի նախասրահում տեղադրված և համակարգչային ցանցին միացված հեռուստամոնիտորների անխափան աշխատանքը:

Մշակվել և շահագործման է հանձնվել «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ» ինտրանետ ներքին համակարգը, որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը:

\* \* \*

Վերոնշյալով հանդերձ՝ հանրային կապերի և տեղեկատվական համակարգերի աշխատանքներում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Տարբեր ստորաբաժանումների (հատկապես ֆակուլտետների) մակարդակում դեռևս ամբողջովին արդյունավետ չէ հանրային կապերի պատասխանատուներ-

րի աշխատանքը, արտաքին և ներքին PR գործընթացներում թույլ է ուսանողների ներգրավման (կամավորական սկզբունքով) մակարդակը,

- Կայքերի և ենթակայքերի տվյալների թարմացման գործընթացը ամբողջովին կանոնակարգված չէ, լինում են ուշացումներ:
- Վերջնականապես ձևավորված չեն հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ հետադարձ կապի մեխանիզմները, թույլ են զարգացած առցանց հարցումների գործիքները:
- Ինտերնետային կայքերը չունեն շարժական սարքերի (Android, iOS) համար նախատեսված հավելվածներ:
- Ուսանողական էլեկտրոնային փոստի համակարգը դեռևս ամբողջովին և արդյունավետ չի օգտագործվում, ցածր է պարբերաբար էլփոստը ստուգող ուսանողների ցուցանիշը:
- ԵՊՀ կառավարման մեկ միասնական տեղեկատվական համակարգը դեռևս ձևավորված չէ:

# ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

## 1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին մշտապես ցուցաբերել է կազմակերպչական և մեթոդական աջակցություն: Աշխատանքներն ընթացել են երկու հիմնական ուղղություններով՝ աջակցություն ԵՊՀ ուսանողական խորհրդի (ՈւԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) նախաձեռնություններին և ծրագրերին, ինչպես նաև ուսանողական կառույցների կարողությունների զարգացում:

Կենտրոնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացրած աշխատանքներից հարկ է առանձնացնել մեծածավալ ծրագրերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (Թաթուլ Կրպեյանի 50-ամյակին նվիրված այց Արցախ, ազատամարտիկներին նվիրված համերգներ Ստեփանակերտում և Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, Թաթուլ Կրպեյանի և Նորայր Մարությանի անուններով պուրակների հիմնում Բերձորում և Ներքին Հոռաթաղ գյուղում, դպրոցի դասարաններից մեկի անվանակոչում Նորայր Մարությանի անունով, Համալսարանի կողմից գրքերի և համակարգիչների փոխանցում դպրոցին): Անցկացվել են մարտական պատրաստության ակումբի անդամների զինպատրաստության գործնական պարամունքներ ԼՂ ՊԲ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերից մեկում (ակումբի անդամները մեկ օր գտնվել են զորամասում և ապրել զինվորի կյանքով), ՀՀ անկախությանն առնչվող թեմաներով դասախոսություններ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, իրականացվել են ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված պուրակի հիմնարկեքի արարողություն Բերձորում, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ԼՂՀ պաշտպանության բանակի սպա-հոգեբանների վերապատրաստման և «Մարտական խաչ» շքանշանի ասպետների փառաբանման ծրագիր ԼՂՀ Ստեփանակերտ և Մարտակերտ քաղաքներում, «Ուսանողական ռազմական բանակում 2016» ծրագիր Արցախի Հանրապետության Հաղրութի շրջանի Տող գյուղում:

Ծրագրերի և նախաձեռնությունների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ուսանողական ամենամյա գիտական հոդվածների ժողովածուի հրատարակումը, ձեռներեցության 6-շաբաթյա դասընթացները (ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից իրականացվող և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ իննովացիոն ծրագիր ՓՄՁ-ների համար» ծրագրի հետ համագործակցությամբ), «Լավագույն ուսանող 2016» մրցույթի կազմակերպումը, աջակցությունը «Երիտասարդական մասնակցությունը ուսանողական ինքնակառավարման գործընթացում» խորագիրը կրող ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների երևանյան երկրորդ համաժողովի կազմակերպմանը և իրականացմանը, սոցիալապես անապահով շուրջ 100 ուսանողների վարձավճարների զեղչերի հատկացումը, ուսանողների ամառային և ձմեռային հանգստի կազմակերպումը և այլ ծրագրեր ու նախաձեռնություններ: Պետք է առանձնացնել ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի հիմնումը, որի գործունեության ընթացքում կազմակերպվել են զինպատրաստության և կրակային պատրաստության դասընթացներ, տեղեկատվական, ռազմական, աշխարհաքաղաքական և այլ թեմաներով դասախոսություններ, հանդիպումներ Արծրուն Հովհաննիսյանի, Սամվել Մարտիրոսյանի, Հրանտ Մելիք-Շահնազարյանի, Վարդան Ոսկանյանի և այլոց հետ, առաջին բուժօգնության և քաղաշտպանության դասընթացներ, «Մարտական խաչ» շքանշանի ասպետների լուսանկարների ցուցահանդես ԵՊՀ-ում և այլն:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին և ուսանողական կառույցներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատին:

\* \* \*

ԵՊՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՀՀ օրենսդրության և ԵՊՀ ՈւԽ կանոնադրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները: ՈւԽ ջանքերով շարունակվել է Համալսարանի կառավարմանը ուսանողների ակտիվ մասնակցությունը՝ տարբեր հարթակներում (ԵՊՀ խորհուրդ, գիտա-

կան խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ) բարձրաձայնելով ուսանողության առնչվող հարցեր: Ուսանողները մասնակցել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, տարբեր միջոցառումների շրջանակներում ՈւԽ-ն ուսանողներին իրազեկել է իրենց իրավունքների և պարտականությունների մասին, միավորել է Համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքի արդյունքում նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, իր մասնակցությունն է ունեցել ԵՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանման գործում, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով: 2015/2016 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈւԽ-ն կազմակերպել է շուրջ 530 միջոցառում:

ՈւԽ աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ, մասնավորապես՝ 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև գործող կրթական համակարգը ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու համար: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր:

Շարունակել է ակտիվորեն գործել ՈւԽ կայքը: Ստեղծվել է «Ուղիղ կապ ՈւԽ-ի հետ» առցանց գործիքը:

Ուսանողական խորհրդի գործունեության առաջնայնությունների շարքում են եղել ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց թվում՝ հանդիպումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ Համալսարանում, ինչպես նաև



այցելություններ գործառնաք, սահմանամերձ գյուղեր, պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը չորս տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ ավանդաբար աշնանը և գարնանը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Համալսարանական պուրակում կազմակերպվող ծառատունկ-ծրագրերով, ինչպես նաև ԼՂՀ պատմաճարտարապետական հուշարձաններ, գործառնաք, դպրոցներ՝ ճանաչողական այցերով:

ԵՊՀ ՈւԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ ՈւԽ-ի աջակցությամբ գրեթե 1000 ուսանողի տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, ցուցաբերվել է այլ աջակցություն: Իրականացվել են ամառային հանգստի, ազատ ժամանցի ծրագրեր:

Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 2500 ուսանող մասնակցել է ՈւԽ-ի կողմից կազմակերպված էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ անցկացվել են բանավեճի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը, երբ ուսանողները մեկ օրով ստանձնում են «Համալսարանը ղեկավարելու» պարտականությունները:

Ուսանողների միջազգային օրվան նվիրված բազմաթիվ այլ միջոցառումների շարքում նոյեմբերի 18-23-ը կազմակերպվել է «Երիտասարդական մասնակցությունը ուսանողական ինքնակառավարման գործընթացում» խորագրով երևանյան երկրորդ միջազգային ուսանողական համաժողովը՝ հետխորհրդային տարբեր երկրներից ժամանած ուսանողների մասնակցությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՈւԽ նախաձեռնությամբ բազմաթիվ տարաբնույթ միջոցառումներ են անցկացվել՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին: «Ուսանող-2016» ամենամյա բնույթ կրող միջոցառումը նվիրվեց ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին, որի շրջանակներում 2015/2016 ուսումնական

տարվա «Ուսանող-2016» մրցույթի հաղթող ճանաչվեցին ռազմական գործողություններին կամավորագրված ԵՊՀ ուսանողները:

Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, բասկետբոլի մրցումներ:

Հաշվետու ուստարում ևս ԵՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի հետ:

ՈւՄ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ կազմակերպությունների հետ կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ և այլն:

\* \* \*

2015/2016 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է ընդհանուր թվով 416 միջոցառում, այդ թվում՝ հանրապետական, միջբուհական ու համահամալսարանական գիտաժողովներ ու աշխատաժողովներ, սեմինար-քննարկումներ, դասախոսություններ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դատախազներ, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ և այլն:

Ուստարվա կարևորագույն միջոցառումը, թերևս, տարեկան գիտական նստաշրջանն էր, որն անցկացվեց 2016 թ. ապրիլի 25-29-ը և նվիրված էր ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին: ՈւԳԸ նստաշրջանի համար ստացվել է շուրջ 500 հայտ ՀՀ և ԼՂՀ շուրջ երկու տասնյակ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից, սակայն գրախոսության փուլում զեկուցման երաշխավորվեց շուրջ 350-ը, ինչն էապես բարձրացրեց զեկուցումների մակարդակը: Գիտաժողովն անցկացվեց 20 բաժանմունքներում: Միջբուհական ու ֆակուլտետային գիտաժողովներ և աշխատաժողովներ անցկացվեցին նաև ԵՊՀ հայ բանասիրության, պատմության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետներում:

Ուստարվա ընթացքում ՈւԳԸ-ն հաստատել կամ ընդլայնել է տարբեր ձևաչափի համագործակցություն ներհամալսարանական և արտահամալսարանական կառույցների հետ, ինչի արդյունքում ավելացել է այլ բուհերի կողմից կազմակերպվող գիտա-

Ժողովներին ու համաժողովներին ԵՊՀ-ից մասնակիցների թիվը: Համագործակցային նախագծերի իրականացման արդյունքում ավելացել է նաև ԵՊՀ ՈւԳԸ գիտաժողովներին արտահամալսարանական մասնակցությունը:

2015/2016 ուստարում ՈւԳԸ մեծ թվով անդամներ արժանացել են ԵՊՀ և ՀՀ լավագույն ուսանողի կոչմանը, ինչպես նաև՝ ՏՏ ոլորտում ՀՀ Նախագահի կրթական պարգևների, նվաճել մրցանակներ միջազգային օլիմպիադաներում: ՈւԳԸ անդամները մասնակցել են նաև միջազգային միջոցառումների, այդ թվում՝ կոնֆերանսների, սիմպոզիումների, համաժողովների ու վերապատրաստման դասընթացների ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Լեհաստանում, Չեխիայում, Ուկրաինայում, Վրաստանում և այլուր:

ԵՊՀ ՈւԳԸ-ն, ստանձնելով ռազմահայրենասիրական դաստիարակության համատեքստում Արցախյան հիմնահարցի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման գործառույթը, կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ սեմինարներ, ֆիլմի դիտումներ, դասախոսություններ, իսկ Իրավագիտության ֆակուլտետի ՈւԳԸ-ն նկարահանել է նաև կարճ տեղեկատվական հոլովակ, որտեղ անգլերենով հակիրճ ներկայացվում են Արցախյան հիմնահարցի էությունն ու զարգացման դինամիկան:

Ուստարվա կարևորագույն իրադարձություններից հարկ է նշել «ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականի հերթական 7 համարների տպագրությունը: Այստեղ տեղ են գտել շուրջ 200 ուսանողի, ասպիրանտի ու երիտասարդ գիտնականի հոդվածներ, որոնք ներկայացվել էին 2014 թ. տարեկան գիտական նստաշրջանին՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին:

Հաշվետու ուստարվա վերջին մեկնարկել են նաև ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածուի 2016 թ. համարների խմբագրական աշխատանքները՝ ներգրավելով մեծ թվով ներկայացուցիչների ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից: Ժողովածուի հերթական համարների տպագրությունը նախատեսվել է իրականացնել 2016/2017 ուստարում:

\* \* \*

2016 թ. ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը բոլորեց իր հիմնադրման 20-ամյակը: Ակումբը, հավատարիմ իր առաքելու-

թյանը, հաշվետու ժամանակաշրջանում ևս ծավալել է ակտիվ գործունեություն՝ պարբերաբար իրականացնելով տարաբնույթ ծրագրեր, այդ թվում՝ այցելություններ ՀՀ ԶՈՒ և ԼՂՀ ՊԲ զորամասեր, ուխտագնացություններ, հուշ-ցերեկույթներ, հանդիպումներ անվանակոչված դպրոցներում, դասախոսություններ, կոնֆերանսներ և այլն (շուրջ 100 միջոցառում): «Վարդանանք»-ցիները զոհված համալսարանական-ազատամարտիկների ծննդյան և հիշատակի օրերին տարբեր ֆակուլտետներում իրականացրել են ոգեկոչման միջոցառումներ: Ակումբի անդամները այցելել են նաև ՀՀ ՊՆ «Եռաբլուր» զինվորական պանթեոն, հանդիպել ազատամարտիկների հարազատների հետ:

## **2. Մշակութային գործունեություն**

Հաշվետու ուստարին հոբելյանական էր ԵՊՀ մշակույթի կենտրոնի համար: Համալսարանի ղեկավարության կողմից հիմնադրված մշակութային և հասարակական լայն գործունեություն ծավալող այս կենտրոնն արդեն տասը տարվա պատմություն ունի: Բազմաբովանդակ գործունեության տարիների ընթացքում կենտրոնը կազմակերպել է բազմաթիվ միջոցառումներ, իրականություն դարձրել նոր և հետաքրքիր ծրագրեր, ընդլայնել Համալսարանի համագործակցության շրջանակները տարբեր պետական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, մշակութային գործիչների հետ, նպաստել է ուսանողության շրջանում մշակութային դաստիարակության ձևավորմանն ու ամրապնդմանը, ստեղծել ինքնաբացահայտման մի հարթակ, որտեղ յուրաքանչյուր ուսանողի առջև բացված են լայն հնարավորություններ՝ արվեստով կրթվելու, ստեղծագործական գործունեություն ծավալելու և ներքին տաղանդը բացահայտելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում նոր շունչ և գաղափարական ձևավորում են ստացել ավանդական դարձած և համալսարանականների կողմից սիրված մի խումբ միջոցառումներ, որոնց թվում են «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը», որը հաշվետու տարում նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, «Լավագույն ուսանող 2015» մրցանակաբաշխությունը (ԵՊՀ ուսանողական խորհրդի հետ համատեղ), Սբ Վարդանանց նահատակներին նվիրված միջոցառում, որն արդեն 7-րդ տարին իրականացվում է Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համատեղ, «Ֆրանսիական երգի փառատոնը», որը 7 տարի շարունակ կազմակերպվում է Ալիաս Ֆրանսեզի և ԵՊՀ ուսանողների մասնակցությամբ Բանասիրության ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի հետ համատեղ: Շարունակվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել է «Պահպանենք հայկական տարազը» ֆլեշ-մոբը և «Աշխարհասփյուռ հայ արվեստագետներ... Իտալիա» միջոցառումը:

Արժևորելով Ազգային բանակի զինծառայողների գործողությունները երկրի սահմանների անառիկության պահպանման հարցում՝ կազմակերպվել են համերգներ՝ ի գորակցություն հայ զինվորների: Այս միջոցառումներից պետք է առանձնացնել Երևանի կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում տեղի ունեցած համերգը և Հ. Թովիկյանի ղեկավարությամբ Երևանի պետական կամերային երգչախմբի համերգը Մշակույթի կենտրոնում:

Կազմակերպվել են մի շարք հոբելյանական միջոցառումներ, որոնցից առանձնահատուկ պետք է նշել Թ. Կրպեյանի 50-ամյակին նվիրված համերգը Ստեփանակերտում, Զորավար Անդրանիկի 150-ամյակին նվիրված դասախոսություն-համերգը: Վերջինս իրականացվել է Պատմության ֆակուլտետի ՈւԳԸ-ի հետ համատեղ:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի սաները մասնակցել են մի քանի կարևոր միջազգային, հանրապետական և համահամալսարանական մրցույթների և փառատոնների: Մասնավորապես՝

- Մշակույթի կենտրոնի մեներգիչ Տիգրան Գրիգորյանը մասնակցել է ուկրաինական «X ֆակտոր» նախագծին՝ հասնելով մինչև կիսաեզրափակիչ: Նա մասնակցել է նաև Ժողովրդական արվեստի միջազգային փառատոնին՝ Խարկովի հայկական մշակութային կենտրոնի հետ համատեղ:

- Հայաստանում ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում Հայ-ռուսական համալսարանում տեղի է ունեցել Ֆրանսիական երգի մրցույթ, որում ԵՊՀ մշակույթի կենտրոնի մեներգիչները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ տեղերը:

- Հայպետֆիլհարմոնիայի կողմից կազմակերպված «Ուսանողական ֆիլհարմոնիա» միջբուհական մրցույթին Մշակույթի կենտրոնի մեներգիչները դասական ժանրում զբաղեցրել են մրցանակային 1-ին, իսկ ժողովրդական ժանրում՝ 3-րդ տեղերը:

- «Արտ Ֆեստ 2016» միջազգային բաց փառատոնին «Համալսարանական» թատրոն-ստուդիան Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում մասնակցել է «Ռոմեո և Ջուլիետ» երաժշտական ներկայացմամբ՝ արժանանալով թատերական մրցույթի «Հատուկ մրցանակ»-ին, իսկ երգարվեստում՝ «Լավագույն էստրադային երգիչ» կոչմանը և «Հատուկ մրցանակ»-ին:

- «Բազե 2016» համահայկական երիտասարդական հավաքին կենտրոնի սաները երգարվեստում արժանացել են 1-ին, իսկ պարարվեստում՝ 2-րդ մրցանակներին:

Տարբեր պետական հաստատությունների հետ ձևավորված համագործակցության արդյունքում ԵՊՀ մշակույթի կենտրոնը կազմակերպել և իրականացրել է հանրապետական մասշտաբի տարատեսակ ծրագրեր և միջոցառումներ: Այսպես՝

- Երևանի Ս. Սարգսյանի անվան համազգային թատրոնի և Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի հետ կնքվել են համագործակցության պայմանագրեր, որի արդյունքում համալսարանականները մասնակցել են «Հովիվուդ, Հովիվուդ» (ռեժ.՝ Ժ. Նշանյան) և «Համլետ» (ռեժ.՝ Վ. Չալդրանյան) ներկայացումների դիտումքննարկումներին:

- Կազմակերպվել է համերգային ծրագիր «Art Vocal Ensemble»-ի հետ համատեղ (գեղ. ղեկ.՝ Առնո Բարխուդարյան), որը ներկայացրել է Կոմիտասյան և ժողովրդական տարատեսակ երգերի հետաքրքիր և նույնիսկ չլսված մշակումներ:

- Կենտրոնը մասնակցել է Մոսկվայի տանը կազմակերպված համերգին՝ նվիրված Կանանց միջազգային օրվան:

- ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց 2016» ծրագրի շրջանակում կազմակերպվել են ազգային երգի ու պարի դասընթացներ (արդեն 5-րդ տարին է, ինչ ԵՊՀ մշակույթի կենտրոնը, համագործակցելով առաջատար մասնագետների հետ, իրականացնում է այս ծրագիրը):

- Մշակույթի կենտրոնը 2016 թ. հուլիսի 17-ին մասնակցել է Հայաստանի Շախմատի ակադեմիայի կողմից կազմակերպված և Մարտունիում անցկացվող «Սևանա լիճ 2016» շախմատի միջազգային երիտասարդական մրցաշարի փակման արարողության համերգային ծրագրին:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը և Հայաստանի ազգային կինոկենտրոնը, շարունակելով իրենց համագործակցությունը, «Կինոաշուն» փառատոնի, Ֆրանկոֆոնիայի օրերի, «Ոսկե ծիրան» փառատոնի շրջանակներում յուրաքանչյուր

չորեքշաբթի համալսարանականներին են ցուցադրել հայկական և արտասահմանյան արտադրության նոր 10 ֆիլմ, որոնց դիտումից հետո տեղի են ունեցել քննարկումներ ֆիլմերի ստեղծագործական խմբի անդամների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ):

Մշակույթի կենտրոնի սաները «Թանգարանային գիշեր 2016»-ի շրջանակներում այցելել են Երևանի թանգարաններ, մասնակցել են մի շարք համերգային ծրագրերի, այդ թվում՝ Գ. Քեոսայանի «Ջազն ընդդեմ ցեղասպանության» համերգին, Սբ Զատիկին ընդառաջ Խոկման արարողությանը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, ՀՀ կոմպոզիտորների միության կողմից կազմակերպված «Հայ ժամանակակից երաժշտության փառատուն»-ին, ՀՀ սփյուռքի նախարարության «Իմ Հայաստան» փառատոնի բացման և փակման արարողություններին, Արզենտինայի «Մասիս» և «Նաիրի» պարային համույթների մենահամերգին:

Մշակույթի կենտրոնի կազմակերպած միջոցառումներին ակտիվորեն մասնակցել են նաև կենտրոնի «ՆԻԿԵ» (Նախաձեռնող, իրականացնող, կամավոր երիտասարդներ) ջոկատի անդամները՝ կատարելով կազմակերպչական, տեղեկատվական և ծրագրային մի շարք աշխատանքներ, ինչով և նպաստել են կենտրոնի գործունեության զարգացմանը:

### **3. Կարիերայի խթանում, աշխատանք շրջանավարտների հետ, ձեռներեցության զարգացում**

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի՝ 2015/2016 ուսումնական տարվա ընթացքում իրականացրած գործունեության հիմնական ուղղություններն են՝

- պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներ,
- ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ,
- ինտերնշիփեր և ուսանողական պրակտիկաներ,
- աշխատանքային հնարավորությունների ընձեռում, թեստավորում,
- աջակցություն կրթաթոշակների տրամադրման հարցում,
- բուհ-ձեռնարկություն համագործակցության արդյունավետության բարձրացում:

Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացներն անցկացրել են ինչպես ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների մասնագետները: Սեմինար-դասընթացների թեմաների շրջանակը եղել է բազմազան: Հարկ է առանձնացնել «Ջի-Ար-Սի գիտելիքի կենտրոն» ընկերության համագործակցությամբ իրականացված «Կառավարում-ռիսկեր-հսկողություն» խորագրով 7-օրյա առցանց դասընթացների շարքը ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև դասախոսական կազմի համար: Ձևաչափի առումով սա նորություն էր, քանի որ փորձագետների մի մասը դասախոսությունն իրականացնում էր առցանց հեռարձակմամբ ԱՄՆ-ից: Դասընթացների անցկացման լեզուն անգլերենն էր:

Հաշվետու ուստարում կենտրոնի կազմակերպած անվճար սեմինար-դասընթացներին մասնակցել են շուրջ 600 ուսանող և շրջանավարտ:

Կենտրոնն անցկացրել է նաև ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող մի շարք հանդիպումներ ոլորտում առաջատար կազմակերպությունների հետ: Նշված միջոցառումների շարքում կարելի է առանձնացնել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԻՄԿ) համագործակցությամբ կազմակերպված հանդիպումը՝ «Հումանիտար գործունեության ոլորտում կարիերա» խորագրով: Հանդիպմանը մասնակցել են ԵՊՀ տարբեր ֆակուլտետների շուրջ 75 հետաքրքրված ուսանող և շրջանավարտ:

Ընդհանուր առմամբ, կազմակերպված հանդիպումներին մասնակցել են 227 ուսանող և շրջանավարտ:

Աշխատաշուկայում երիտասարդ մասնագետների ինտեգրման և մրցունակության բարձրացման հարցում կարևորվել է գործնական հմտությունների գործոնը. այդ առումով կազմակերպվել են նաև բազմաթիվ ինտերնշիփեր և լրացուցիչ ուսանողական պրակտիկաներ, որոնց մասնակցել է ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 153 ուսանող, մասնավորապես՝ 54 ուսանող՝ «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթըմզ» ընկերությունում, 18-ը՝ «Էներջայզ Գլոբալ Սերվիսիզ» ՓԲԸ-ում, 19-ը՝ «Վիվա Սել-ՄՏՍ» ընկերությունում, մեկը՝ ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի վարչությունում և այլն:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կենտրոնի և «ԱՅ ՍԻ ԷԼ ԹԻ» քեմբրիջյան արտոնագրված կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվել է թեստավորում, որին մասնակցել են ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 24 ուսանող և շրջանավարտ: Թեստավորման արդյունքների ամփոփումից հետո



լավագույններն ստացան վերապատրաստվելու և ընկերությունում աշխատելու հնարավորություն:

Ձեռնարկությունների հետ համագործակցության շնորհիվ կենտրոնն աջակցել է 124 ուսանողի և շրջանավարտի՝ աշխատանքի ընդունման հարցում: ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի համագործակցությամբ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը վճարել է ԵՊՀ 10 ուսանողի տարեկան վարձավճարը:

Բուհ-ձեռնարկություն համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների շրջանակում կենտրոնն ավարտել է Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության պորտալի ամբողջացման աշխատանքները, և կազմակերպված միջոցառման ընթացքում այն ներկայացվել է շահառու բոլոր կողմերին: Պորտալում ներկայացված են ԵՊՀ գործընկեր ձեռնարկությունների տվյալների բազան՝ ըստ ոլորտների, ձեռնարկությունների հետ համագործակցության ֆակուլտետային խորհուրդների կազմը, իրականացված աշխատանքները, ինչպես նաև հայտարարություններ պրակտիկաների, աշխատանքային հնարավորությունների, դասընթացների վերաբերյալ: Պորտալի միջոցով կապահովվի ԵՊՀ - ձեռնարկություններ փոխգործակցության գործընթացի վերաբերյալ առցանց տեսանելիությունը:

Հատուկ շեշտադրման կարիք ունի նորաստեղծ ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնի աշխատանքների մեկնարկը: ԵՊՀ-ն, համագործակցելով «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետ, հաշվետու ուստարում մեկնարկել է Ձեռներեցության զարգացման կենտրոնի գործունեությունը: Կարճ ժամանակահատվածում նախանշվել են կենտրոնի աշխատանքային ուղղությունները, կազմակերպվել մի շարք միջոցառումներ, համագործակցության մեխանիզմներ մշակվել ձեռներեցության և Start-Up-ների խթանման ուղղությամբ գործող միջազգային և տեղական կառույցների հետ:

\* \* \*

Վերոնշյալով հանդերձ՝ ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներում ևս առկա են թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Ուսանողական կազմակերպությունների ֆակուլտետային օղակների գործունեության պլանավորման բաղադրիչը և կազմակերպչական աշխատանքների որոշ փուլեր բարելավման կարիք ունեն:

- Մի շարք կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում (կենտրոններ, ինստիտուտ) դեռևս ամբողջովին ձևավորված չեն ուսանողական կազմակերպությունների համապատասխան օղակները:
- Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների (ֆիզիկական դժվարություններ, ծանր սոցիալական խնդիրներ ունեցող և այլ անձինք) ուսումնառության համար դեռևս առկա են էական խոչընդոտներ:
- Դիլիջանի մարգաառողջարանային համալիրը և Հանքավանի և Բյուրականի ուսումնասարտադրական բազաների վիճակը բավարար չէ ուսանողական ամառային հանգստի և այլ միջոցառումների իրականացման համար:
- Շրջանավարտների զբաղվածության վիճակագրական բազան, ինչպես նաև շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները բարելավելու կարիք ունեն:
- Ուսանողների լրացուցիչ պրակտիկաները (ինտերնշիփերը), ինչպես նաև ձեռնարկությունների հետ համագործակցության մակարդակը բարելավելու և ընդլայնվելու կարիք ունեն:

## ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ռեկտորատի ու արհեստակցական կազմակերպության համար շարունակել է առաջնային մնալ ԵՊՀ աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը: Այդ և սոցիալական գործընկերության մակարդակի բարձրացման նպատակով մի շարք աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով Համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործումը: Արդյունքում՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից օգնության կարգով ԵՊՀ 309 աշխատողի, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացվել է 16 մլն 225 հազար դրամի օգնություն:

2015/2016 ուստարում ԵՊՀ աշխատողների ԵՊՀ-ում սովորող 193 երեխայի համար կիրառվել է ուսման վարձի մինչև 80 % զեղչ՝ ԵՊՀ ֆինանսական միջոցներից հատկացնելով 58 մլն 470 հազար դրամ, իսկ խրախուսման և օգնության նպատակով 104 աշխատողի հատկացվել է 16 մլն 888 հազար 800 դրամ:

Աշխատողների երեխաներին և թոռնիկներին (1860 հոգու) ամանորյա հրաշքին մասնակից դարձնելու նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպել է միջոցառումներ՝ ամանորյա ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ Հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության օրը, իսկական տոն դարձնելու համար ձեռք է բերել մանկական երաժշտական ներկայացման 1200 տոմս:

Ուշադրությունից չեն վրիպել նաև համալսարանական կին աշխատողները: Ֆակուլտետներում և ստորաբաժանումներում իրականացվել են Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված միջոցառումներ 1857 կին աշխատողների համար՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից ծախսելով 3 մլն 873 հազար 044 դրամ գումար:

Համալսարանականներն անմասն չեն մնացել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքից: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցական կազմակերպու-

թյունը ձեռք է բերել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացրել համերգային և թատերական տարբեր ներկայացումների 2571 տոմս:

Հաշվետու շրջանում Ծաղկաձորի ուսումնասրտադրական բազայում հատկացված ուղեգրերով իրենց հանգիստն են կազմակերպել համալսարանի մոտ 601 աշխատողներ, նրանց ընտանիքի անդամներ և ուսանողներ (2566 մարդ-օր): Սոցիալապես առավել անապահով աշխատողների նկատմամբ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը կիրառել է ուղեգրերի արժեքը 50 տոկոսով զեղչելու սկզբունքը:

Շարունակելով «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագիրը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում 46 աշխատողի ընդհանուր առմամբ հատկացրել է 2 մլն 975 հազար դրամ գումար (21-ին՝ առաջին երեխայի համար, 14-ին՝ երկրորդի, 8-ին՝ երրորդի, 2-ին՝ առաջին գույգ երեխայի համար և 1-ին՝ առաջին եռյակի համար):

2015/2016 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության աջակցությամբ որոշ ֆակուլտետների կոլեկտիվներ մեկօրյա արշավներ են կազմակերպել դեպի Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր:

Աչքաթող չեն արվում նաև նորապսակ համալսարանականները: Համատեղ կյանքի դեռևս մեկ տարին չբոլորած ԵՊՀ նորապսակ աշխատողներին Ծաղկաձորի ուսումնասրտադրական բազայում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցների հաշվին արհկոմիտեի կողմից անվճար հնգօրյա ուղեգիր հատկացնելու ծրագրից հաշվետու ժամանակահատվածում օգտվել է 7 գույգ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում շարունակում է գործել անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունը ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրից օգտվել է 103 ԵՊՀ աշխատող:

Հավատարիմ մնալով ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնությանը՝ հաշվետու ուստարում իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը սահմանվածից 10 % զեղչով են իրականացրել ԵՊՀ 201 աշխատող և ուսանող:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությամբ 2016 թ. հունվարի 1-ից ԵՊՀ-ն հաշմանդամություն ունեցող աշխատողների համար իրականացնում է

սոցիալական ծրագիր, որի շրջանակներում հաշմանդամություն ունեցող ԵՊՀ բոլոր աշխատողների համար սահմանվել է աշխատավարձի հավելավճար ըստ հաշմանդամության խմբի (1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողների համար՝ 20.000 դրամի չափով, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողների համար՝ 15.000 դրամի չափով, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողների համար՝ 10.000 դրամի չափով): Ծրագրից օգտվել է ԵՊՀ 71 աշխատող, որոնց հատկացված հավելավճարը կազմել է 6 մլն 723 հազար դրամ:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015/2016 ուստարվա ընթացքում զգալիորեն բարելավվել է ԵՊՀ տնտեսական գործունեությունը: Համալսարանի ծախսերի և եկամուտների նախահաշվով հատկացված միջոցների շնորհիվ ձեռք են բերվել շուրջ 14.4 մլն դրամ արժողությամբ համակարգչային տեխնիկա, համակարգչային պահեստամասեր, պատճենահանող և տպիչ սարքեր, ինչպես նաև 6.5 մլն դրամի կենցաղային սարքավորումներ և էլեկտրատեխնիկա, 22.2 մլն դրամի տնտեսական ապրանքներ ու սանհիգիենիկ միջոցներ, 8 մլն դրամի քիմիական նյութեր, 2.9 մլն դրամի ցուցանակներ, ուղեգորգեր և շերտավարագույրներ, 22 մլն դրամի կահույք, 19 մլն դրամի գրենական պիտույքներ, 3 մլն դրամի պոլիգրաֆիական նյութեր, 4.9 մլն դրամի ավտոպահեստամասեր, 18.7 մլն դրամի վառելիք:

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են աննախադեպ՝ շուրջ 1.8 մլրդ դրամի շինարարական ու վերանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվել է ԵՊՀ մարզահամալիրը: Վերջինիս կից կառուցվել է ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի նոր մասնաշենքը: Կատարվել են հյուրանոցային համալիրի, հրաձգարանի կառուցման աշխատանքներ: Նորոգվել է Համալսարանի կենտրոնական մասնաշենքի առաջին հարկի առաստաղը, ամբողջովին փոխվել է ճեմասրահի լուսային համակարգը, հաշմանդամների համար տեղադրվել է երկու վերելակ: Վերանորոգվել են ավտոպարկի, 1-ին և 8-րդ մասնաշենքերի տանիքները: Ավտոպարկի տարածքում կատարվել է ավտոկայանատեղիի ծածկի կառուցում: Տարբեր մասնաշենքերում նորոգվել են լսարաններ, լաբորատորիաներ և սանհանգույցներ:

ԵՊՀ ավտոպարկը ձեռք է բերել նոր մեքենաներ և տեխնիկա՝ ավտոբուս, տրակտոր (իր կցորդով), բուլդոզեր և բեռնամբարձիչ (ընդամենը՝ 39 մլն դրամ): Իրականացվել է 330 ուղերթ, այդ թվում՝ 117-ը գիտաժողովների և հյուրերի սպասարկման համար, 102-ը՝ ուսումնասիրտադրական պրակտիկայի և էքսկուրսիաների համար, 111-ը՝ ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների համար:

Կազմակերպվել են Համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգիստը, ինչպես նաև ուսումնասիրտադրական պրակտիկայի հետ կապված աշխատանքները Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնասիրտադրական բազաներում:

Համալսարանի մասնաշենքերի հարակից տարածքներում ծաղկազարդման համար տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժինը ձեռք է բերել և աճեցրել շուրջ 1200 թուփ և ծաղիկ, որոնք բարեխղճորեն խնամվում են:

Մանիտարական մաքրման ծառայություն մատուցող “Crystal Cleaning” ՍՊԸ-ն համալրվել է նոր և կատարելագործված “NEMO POLE” 4 սարքավորումով: Վերջինս նախատեսված է շենքերի ճակատային դժվար հասանելի հատվածներում ապակիների մաքրման համար:

Տարվա ընթացքում հակահրդեհային ծառայության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ: Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանում տեղադրվել է հրդեհի ինքնաշխատ ազդարարման համակարգ (4.4 մլն դրամ): Կենտրոնական մասնաշենքի տանիքի փայտյա կառուցատարրերը պատվել են հրակայուն լուծույթով (շուրջ 1 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում անվտանգության ծառայության կողմից բոլոր մասնաշենքերը համալրվել են անհրաժեշտ քանակի տեսախցիկներով:

## ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին վերագրված է հատուկ առաքելություն՝ նպաստել հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը:

Մայր բուհի անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ մասնաճյուղը պատվով ծավալում է իր գործունեությունը: Նրա կարևոր ձեռքբերումներն են աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագիտություններով ուսումնառության կազմակերպումը, կրթական վերջնարդյունքներով ձևակերպված և ներդրված 14 կրթական ծրագրերն ու դասավանդվող բոլոր դասընթացների համար փաթեթները, որակի ներքին ապահովման գործընթացը, կրեդիտային համակարգի և էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» համակարգի լիարժեք կիրառումը, Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի ստեղծումը, ուսումնական ենթակառուցվածքների բարելավումն ու արդիականացումը:

Կրթօջախի ունեցած հեղինակության և կայուն գործունեության մասին են փաստում շրջանավարտների կողմից նրան տրված գնահատականները: Մասնաճյուղի առկա ուսուցմամբ շրջանավարտների 92.9 %-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 95.2 %-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից, իսկ 90 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ:

Հաշվետու ուստարին առանձնանում է մասնաճյուղի զարգացման՝ 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ավարտով և ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված՝ մասնաճյուղի 2016-2020 թթ. ՌԾ-ի հաստատումով: Հարկ է փաստել, որ վերջին հինգ տարիներին մասնաճյուղն իր գործունեությունն ուղղել է 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի 8 նպատակներով պայմանավորված 114 գործողությունների արդյունավետ իրագործմանը: Ռազմավարական գործունեության հնգամյա ժամանակաշրջանում մասնաճյուղն իր առջև դրված խնդիրների 67 %-ն իրականացրել է ամբողջությամբ, 13 %-ը՝ մասնակի, և կան խնդիրներ (20 %), որոնք հաշվետու ժամանակահատվածում ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով հնարավոր չի եղել իրականացնել: Այդ գործողությունները կամ նրանց ավելի արդիական պահանջները ներառվել են նոր ռազմավարական



ծրագրի մեջ: Կազմվել է ռազմավարական ծրագրի իրականացման վերաբերյալ գեկույցը:

ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտությունների հիմնական ուղղվածությունը մանկավարժական է, այն մարզի սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցներն ապահովում է բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրերով: Մասնաճյուղն իր ուսումնասիրությունների արդյունքում անմիջականորեն արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: Արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը: Հաշվի առնելով մարզում տարրական դասարանների ուսուցիչների մեծ պահանջարկը՝ մասնաճյուղը հաշվետու ուստարում իրականացրել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով 2016/2017 ուստարում ուսումնառության կազմակերպման նախապատրաստական աշխատանքները:

2015/2016 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 11 մասնագիտությունների գծով ընդունվել է 161 ուսանող (38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 217-ը: Նախորդ տարվա համեմատ նկատելի է դիմորդների թվի աճ թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցման համակարգերում:

Մասնաճյուղի դիմորդների 90 %-ից ավելին կազմում են Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտները: Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Մասնաճյուղն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 1000 աշակերտների հետ: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ են կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ ուսումնական տարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվել են «Բաց դռների օրեր»:

Մասնաճյուղի հարստությունն իր ուսանողներն են: 2015/2016 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1682 ուսանող, նրանցից 1528-ը՝ վճարովի: Մասնաճյուղը բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տվել է 189, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 161 շրջանավարտ, նրանցից գերազանցության դիպլոմով ավարտել է 21-ը:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 119 ուսանող (այդ թվում՝ 3-ը արտամրցութային): Պետական և ներքուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 139 ուսանողի, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 12 ուսանող: 2015/2016 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 336 ուսանող, այդ թվում՝ 152-ը՝ առկա ուսուցման համակարգում:

Ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին: Հաշվետու ուստարում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման (շուրջ 1172 ք. մ.) աշխատանքներ. վերանորոգվել է 12 լսարան, վերակառուցվել է ջեռուցման համակարգը, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում և այլն:

Մասնաճյուղն իր գործընթացների արդյունավետ կազմակերպման համար ուսանողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ կազմին ապահովել է բավարար տեխնիկական միջոցներով: Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է տեսասարքով համալրված համակարգչային 5 սրահ և 3 լսարան, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան, 1 մասնագիտական լաբորատորիա, 9 արվեստանոց: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 50 տպող սարքով (26 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ և 2 գունավոր բազմաֆունկցիոնալ):

Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 140 համակարգիչ, 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ խորհրդակցությունների դահլիճ:

Մասնաճյուղում կայուն ներդրված է որակի ներքին ապահովման համակարգը, որի գործընթացների շրջանակներում իրականացվել են որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդնում, խորհրդատվական աշխատանքներ, ներքին և արտաքին շահակիցների շրջանում անց են կացվել պլանավորված հարցումներ, կատարվել են դրանց արդյունքների համալիր վերլուծություններ: Հաշվետու ուստարին նշանակալից է նաև նրանով, որ հերթական անգամ կատարվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատում, կազմվել է համապատասխան զեկույցը: Մշակվել է Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը, հավաքագրվել, ամփոփ կազմվել է արտաքին և ներքին շահակիցների առաջարկությունների և կարծիքների փաթեթ, կատարվել է դրանց վերլուծություն, իրականացվել է 2011-2015 թթ. ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության վերլուծություն:

Հաշվետու ուստարվա կարևոր ձեռքբերումներից է բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»-ի՝ որպես մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելի ստեղծումն ու նրա կայուն ներդնումը, որի միջոցով մասնաճյուղն ակնկալում է ստեղծել ինքնագարգացող մանկավարժական միջավայր: 2016 թ. մարտին մշակվել են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթները, ապրիլին նշանակվել են ծրագրերի ղեկավարներ, և ուրախությամբ պետք է նշել, որ այդ գործընթացն արդեն տվել է իր առաջին պտուղները:

Համալրվել և վերլուծվել են մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները, կազմվել է համապատասխան հաշվետվություն: 2016 թ. մարտից ստեղծվել է բանավեճի ակումբ, որի նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր: Պարբերաբար իրականացվում են հանդիպում-քննարկումներ ֆոկուս-խմբերի հետ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 120 դասախոս, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.5 %), 36 դոցենտ (30 %), 48 ասիստենտ և 33 դասախոս (67.5 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 63 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 50 %-ից ավելի է: Մասնաճյուղում դասախոսների միջին տարիքը 48 է. մինչև 35 տա-

րեկան դասախոսների թիվը 21 է (17.5 %), 36-65 տարեկան՝ 68 (56.7 %), 65-ից բարձր՝ 8 (6.7 %)։ Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 42.5 % -ը (51)։

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2015/2016 ուստարում կազմել է 19.57։

Դասախոսների տարեկան ուսումնական բեռնվածության միջինը հաշվետու ուստարում կազմել է 815.9 ժամ (նախորդ ուստարում՝ 811.8 ժամ)։

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում։ Աջակցվում և խրախուսվում են նրանց ինքնակրթության և ինքնագարգացման բոլոր դրսևորումները (գործուղումներ, վերապատրաստման դասընթացներ, պարզևատրումներ և այլն)։ Գործում է ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը, որի կազմակերպած դասընթացների նպատակն է բարձրացնել երիտասարդ դասավանդողների որակավորումը, կատարելագործել նրանց դասավանդման մեթոդիկան, նպաստել ուսումնական գործընթացում կրթական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը։ Հաշվետու ուստարում կենտրոնը երիտասարդ դասախոսների համար կազմակերպել է նպատակային մի շարք դասընթացներ։ Հաջողությամբ գործում է 2015 թ. ստեղծված Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնը։

Մասնաճյուղում արդյունավետ գործում է սկսնակ դասավանդողների մենթորության ինստիտուտը։ Երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց են հրավիրում իրենց դասերին։

Երիտասարդ դասախոսների կայացմանը և նրանց գիտական գործունեությանը աջակցում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները։ Հաշվետու ուստարում հրատարակվել է 2 ժողովածու, որոնցում ընդգրկված 66 հոդվածներից 34-ի հեղինակները մասնաճյուղի հիմնական դասախոսներն են։

Հարկ է նշել, որ վերջին 5 ուստարիների ընթացքում թեկնածուական թեզ պաշտպանած 27 դասախոսներից 21-ը հիմնական աշխատողներ են, այդ թվում՝ 16-ը՝ երիտասարդ, իսկ 10-ը մասնաճյուղի շրջանավարտներ են։ Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 9 հայցորդ։

Մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են 7 մենագրություն, 13 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 111 գիտական հոդված, գեկուցման 6 թեզիս: ՀՀ ԳԿ պետական դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված են 2 դասախոս, 35 դասախոս մասնակցել է տարբեր գիտաժողովների, որից 8-ը ՀՀ-ում կայացած միջազգային, 8-ը արտասահմանում կայացած միջազգային գիտաժողովներ են: Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է ստացել մասնաճյուղի 4 դասախոս, 2 դասախոս պարգևատրվել է ԵՊՀ հուշամեդալով:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով: 2015/2016 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքների համաձայն՝ բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.54-ից:

Համալսարանականներին ու մարզի քաղաքացիներին գեղագիտական, համամարդկային արժեքներ փոխանցելու գործում իր ուրույն տեղն ունի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետը, որի ուսանողների և դասախոսների կողմից կազմակերպված գեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսները, նրանց իսկ կարած հագուստի ցուցադրություններն ընդունվում են ոգևորությամբ: 2015/2016 ուստարում կազմակերպվել է 5 ցուցահանդես՝ նվիրված 110000 հայ որբերի կյանքը փրկած դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենին, Կանանց միջազգային օրվան, Գեղեցկության և մայրության, Ուսանողության տոներին և այլն: Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կատարել են պլեներային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում՝ Հաղարձնում, Կողբի եկեղեցում, Նոյեմբերյանի արվեստի դպրոցում, Իջևանի քաղաքային զբոսայգում, դենդրոպարկում և այլուր:

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը: Վերանայվել կամ կազմվել են պրակտիկաների ծրագրերը: Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները: Հաշվետու ուստարում արտա-

դրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 223 ուսանող: Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել 335 ուսանողներ, որոնցից 10-ը՝ դաշտային:

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն: Մասնաճյուղի 16 ուսանողներ ընդգրկված են եղել VivaCell MTS-ի կրթական ֆոնդում:

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն:

Պարբերաբար կատարելագործվում է մասնաճյուղի պաշտոնական կայքը: Այն այսօր ունի 194 էջ, տեղադրված է 1449 նյութ, 6051 ֆայլ, որոնցից 4107-ը նկարներ են: Կայքի «ԶԼՄ-ները մեր մասին» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ՉԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր:

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կայք, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը ներառում է 14623 գիրք, որից 6056-ը դասագիրք է, 2390-ը ծրագրային գեղարվեստական, 2942-ը ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր են: Գրադարանը համալրված է 1750 էլեկտրոնային-տեղեկատվական նյութերով, 70 քարտեզներով և այլն: Գրադարանային ֆոնդի համալրումը կատարվել է մասնաճյուղի կողմից գնման և նվիրատվությունների (այդ թվում՝ ուսանողների և դասախոսների կողմից) միջոցով: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Մասնաճյուղում կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 60 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու աշխատանքի հարմար

րավետ պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կառույցները (ՈւԽ, ՈւԳԸ): Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և սպորտային շուրջ 35 միջոցառումներ և հանդիպումներ, ապահովվել մասնակցություն ԵՊՀ ուսանողական ձեռնարկումներին: ՈւԳԸ-ի կողմից կազմակերպվել են զեկուցումների շարքեր ֆակուլտետներում, մասնագիտական ֆիլմերի դիտումներ, ինտելեկտուալ խաղեր, շարադրությունների մրցույթներ, մարզի դպրոցականների համար օլիմպիադաներ: Նրա անդամները մասնակցել են 2 գիտաժողովի, նաև բիզնես թրեյնինգի դասընթացների:

«WRITE ON! COMPETITION 2016» մրցույթի հանրապետական փուլում հաղթել են մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության տարբեր կուրսերի 8 ուսանողներ: Հանրապետական հանձնաժողովը նրանցից 2-ի աշխատանքներն ուղարկել է միջազգային երրորդ փուլ, որտեղ ընդգրկված 18 երկրների ներկայացուցիչների՝ 1000-ից ավելի շարադրությունների մեջ 2-րդ կուրսեցիների անվանակարգում մասնաճյուղի ուսանողուհու աշխատանքը գրավել է երրորդ տեղը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը մշտապես գտնվում է ԵՊՀ-ի ուշադրության կենտրոնում, նրա ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները պայմանավորված են Մայր բուհով:

\* \* \*

Ամփոփելով Երևանի պետական համալսարանի 2015/2016 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ կրկին պետք է փաստել, որ Մայր բուհը հաշվետու ժամանակաշրջանում զգալի ձեռքբերումներ ու հաջողություններ է գրանցել համալսարանական կյանքի բոլոր բնագավառներում: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ եղել են նաև բացթողումներ ու թերացումներ, որոնք շտկելու համար պետք է ներդնել լուրջ ջանքեր, իրականացնել համառ ու հետևողական աշխատանքներ:

**ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2015-2018 ԹԹ.  
ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ (2016 Թ.)**

**Հակակոռուպցիոն քաղաքականություն, աշխատանքային  
գործընթացներ և միջոցառումներ**

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2016-2020 թթ.) **«Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում»** խորագիրը կրող 8-րդ ռազմավարական նպատակն է. «Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»: Այս նպատակի համատեքստում սահմանված է Խնդիր 8.4-ը՝ **«Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»**, որի առաջին գործողությամբ նախատեսվում է կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիր:

2015 թ. փետրվարի 19-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունվել է **ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը**, որը ներկայումս հանդիսանում է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների կարևոր ուղղություններն ամփոփող և համապատասխան միջոցառումներն ու դրանց ժամանակացույցը սահմանող հիմնական ներքին իրավական փաստաթուղթը, որի մշակման ընթացքում հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում (2011-2012 թթ. և 2013-2014 թթ.) իրականացված հակակառուպցիոն ծրագրերի արդյունքները: Ծրագրի հիմնական թիրախը կոռուպցիոն ռիսկերն են, իսկ գործողությունների առումով շեշտադրվում են ինչպես իրազեկվածության մակարդակը բարձրացնող և մասնակցային գործընթացները խթանող, այնպես էլ տարբեր ռիսկեր և երևույթներ կանխարգելող ու չեզոքացնող, դրանց նկատմամբ հսկողությունը խստացնող միջոցառումները:



Ծրագրի խնդիրներից են կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը, ներքին իրավական ակտերի և համապատասխան էթիկայի կանոնների մշակումը, կառավարման ու վերահսկման մեխանիզմների կատարելագործումը՝ ապահովելով տարբեր գործընթացների առավել կանոնակարգված, թափանցիկ և հրապարակային ընթացքն ու հնարավորինս բացառելով գործառնության շահերի բախումը:

ԵՊՀ ռեկտորի 2014 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով ձևավորված ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովը 2016 թ. ընթացքում հրավիրել է մի շարք նիստեր ու աշխատանքային խորհրդակցություններ, համակարգել է տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքները:

2016 թ. ԵՊՀ հակակոռուպցիոն մի շարք միջոցառումներ կազմակերպվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության մասնակցությամբ և Եվրոպայի խորհրդի ու Եվրոպական միության ծրագրային համագործակցության շրջանակներում համատեղ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի» շրջանակներում: 2016 թ. հունվարի 26-ին ԵՊՀ ռեկտորը և ռեկտորատի ներկայացուցիչները հանդիպել են ծրագրի ղեկավար, Եվրոպայի խորհրդի կրթության տնօրենության՝ ԱՊՀ-ում և Կենտրոնական Ասիայում տարածաշրջանային և երկկողմանի համագործակցության բաժնի ղեկավար Կատյա Դոլգովա-Դրեյերի և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի աշխատակից, ծրագրի համակարգող Լիանա Ամիրբեկյանի հետ, քննարկվել են ԵԽ ծրագրի համապատասխան արդյունքներն ու երաշխավորությունները ՀՀ բուհական համակարգում և, մասնավորապես, ԵՊՀ-ում ներդնելու հետ կապված բազմաբովանդակ հարցեր:

Այս համագործակցության շրջանակներում 2016 թ. փետրվարի 24-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտխորհրդի ընդլայնված նիստ (<http://ysu.am/news/hy/Necessity-of-introduction-of-Ethics-regulation-at-the-universities>), որի ընթացքում Շոտլանդիայի արևմուտքի համալսարանի կրթության ֆակուլտետի պրոֆեսոր, ծրագրի փորձագետ Յան Սմիթը համալսարանականներին ներկայացրեց «Բուհերում դերակատարների էթիկայի կանոնագիրք» ու «Բարձրագույն կրթության ոլորտի էթիկայի կանոնագիրք կազմելու մասին ուղեցույց» փաստաթղթերի նախագծերը:

Նույն օրը՝ 2016 թ. փետրվարի 24-ին, ԵՊՀ ռեկտորի հրավերով ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ նաև Հայաստանի բուհերի ռեկտորների խորհրդի նիստ, որի ընթացքում ՀՀ տարբեր բուհերի ռեկտորների, պրոռեկտորների և այլ ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվեցին ԵԽ ծրագրի շրջանակներում մշակված էթիկայի կանոնադրքերին առնչվող վերոհիշյալ փաստաթղթերի նախագծերը: Կազմակերպված քննարկումների արդյունքում փաստաթղթերի հեղինակներին և ԵԽ ծրագրի ներկայացուցիչներին ԵՊՀ գիտական խորհրդի անդամների և Հայաստանի բուհերի ռեկտորների խորհրդի կողմից ներկայացվեցին մի շարք հարցեր և առաջարկություններ:

ԵԽ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի» էթիկայի կանոնակարգին առնչվող բաղադրիչը էապես կարևոր է ԵՊՀ-ի համար, քանի որ էթիկայի կանոնների մշակումը նախատեսված է ԵՊՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ծրագրով (միջոցառում 2.1), և 2016 թ. ընթացքում կայացած քննարկումները լուրջ նախադրյալներ են ստեղծել առաջիկա տարիներին համապատասխան փաստաթուղթը կյանքի կոչելու համար:

### **Կրթական գործընթաց, գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխատեղումներ**

«Կրթական գործընթացում կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում» միջոցառման շրջանակներում առանձնահատուկ պետք է նշել 2016 թ. հուլիսի 7-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը, պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության համար նախատեսված տեսաձայնագրման համակարգի կատարելագործումը, «Ուսանող-համալսարան» վիրտուալ տիրույթի ստեղծումը (դեռևս գործում է թեզերի և ավարտական աշխատանքների ներբեռնման բաղադրիչը) և այլ աշխատանքներ:

Ինչպես և նախորդ տարիներին, հնարավոր խախտումները կանխելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ստորաբաժանումներն իրականացրել են ստուգումներ ԵՊՀ-ում ուսումնական գործընթացին առնչվող գործառնությունների շրջանակներում: Ապահովվել է փոխատեղման արդյունքների բաց և հրապարակային գործընթաց (արդյունքները հրապարակվում են ֆակուլտետներում, իսկ ուսանողներն ունեն բողոքարկման հնարավորություն): Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր ամփոփիչ ատեստավորումները (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզի պաշտպանություն) իրականացվել են տեսաձայնագրմամբ, իսկ բողոքարկումներն անցկացվել են տեսանյութի քննարկման հիման վրա:

### **Քարոզչական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում**

ԵՊՀ ներքին հաղորդակցության գործընթացներում մշտապես ակտուալ է եղել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը, ողջ տարվա ընթացքում «Երևանի համալսարան» ամսաթերթում և պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը, հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանը վերաբերող նյութեր, ԵՊՀ ռեկտորատի ներկայացուցիչները պարբերաբար հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ և քննարկել վերոհիշյալ խնդիրները:

Համալսարանական համակարգի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են Համալսարանի ինտերնետային պորտալի հնարավորությունները: Ուսանողների տեղեկացվածությունն ապահովելու նպատակով ԵՊՀ կայքում տեղադրվել են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգով սովորող ուսանողների համար (<http://ysu.am/education/hy>): Առաջին կուրսեցիների ընդունելությանը ընդառաջ թարմացվել է «Կրթություն հանուն ապագայի» առաջին կուրսեցու առցանց ուղեցույցը (<http://1course.yasu.am/>):

Շարունակաբար գործարկվում և օպերատիվ կերպով թարմացվում է ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» կայքը (<http://doc.yasu.am>) կայքը, որն ապահովում է ներհամալ-

սարանական փաստաթղթերի հասանելիությունը: Մասնավորապես՝ առկա են տարբեր մակարդակների կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները, ստորաբաժանումների կանոնադրությունները, հաշվետվությունները, ռեկտորի հրամանները և մի շարք այլ փաստաթղթեր:

ԵՊՀ կայքի միջոցով իրականացվում է տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանք: Կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով 2016 թ. ընթացքում ստացվել է 1348 նամակ, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ: Հետադարձ կապ է ապահովվում նաև ԵՊՀ ֆեյսբուքյան էջի և էլեկտրոնային փոստի միջոցով:

### **Ներքին իրավական ակտերի մշակում**

ԵՊՀ ներքին իրավական ակտերի վերանայման աշխատանքների ժամանակացույցի համաձայն շարունակվել է ներքին իրավական ակտերը ԵՊՀ նոր կանոնադրությանը համապատասխանեցնելու գործընթացը: Մասնավորապես՝ վերանայվել, մշակվել և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ փաստաթղթերը.

- ԵՊՀ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժնի կանոնադրությունը,
- ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը,
- ԵՊՀ կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգը,
- Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը,
- Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը,
- ԵՊՀ ֆակուլտետի ղեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ),
- Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ),

- Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգում փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշումը,
- ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը,
- Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը:

### **Անձնակազմի կառավարում, գնումների գործընթաց**

ԵՊՀ ներքին իրավական ակտերի համաձայն իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման, դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ: 2016 թ. ընթացքում հայտարարվել է պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմի պաշտոնների 64 մրցույթ: ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում (անկախ կանոնակարգի պահանջից):

2016 թ. հաստատվել է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը, որի նպատակն է ապահովել ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական, արտադրական տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարումը: Կանոնակարգը սահմանում է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների համակարգի ձևավորման սկզբունքները, վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների աստիճանակարգումը, վարչական պաշտոնների անձնագրերի և ուսումնաօժանդակ ու ինժեներատեխնիկական հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները, սահմանում է աշխատողների իրավասությունների շրջանակները, կանոնակարգում է սահմանված համակարգի կազմակերպման և բնականոն գործունեության ապահովման հետ առնչվող այլ գործընթացներ:

2016 թ. հաստատվել և 2017 թ. կիրառվելու է ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը, որը սահմանում է ԵՊՀ աշխատողներին վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը՝ գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար: Այս համակարգը բացառում է ԵՊՀ աշխատողներին վճարվող լրավճարների գործընթացում սուբյեկտիվ գործոնը, այն դարձնում է առավել արդյունահեն, պարզ և կանխատեսելի: 2016 թ. մշակվել և գործարկվել է «Համալսարանի աշխատակիցների ներքին տիրույթը», որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը: Այս համակարգի գործադրմամբ կիրականացվեն նաև ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման աշխատանքները: ԵՊՀ աշխատողներին աջակցելու նպատակով ստեղծվել է «Համալսարանի աշխատակիցների ներքին տիրույթի օգտագործողի ուղեցույց» ([http://documentation.y-su.am/wp-content/uploads/2016/06/YSU\\_staff\\_intranet\\_20\\_06\\_2016.pdf](http://documentation.y-su.am/wp-content/uploads/2016/06/YSU_staff_intranet_20_06_2016.pdf)):

2016 թ. մայիսի 26-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագրի (2016-2021 թթ.) կազմակերպման կանոնակարգը: 2016 թ. սեպտեմբերի 29-ի ԵՊՀ գիտական խորհրդի նիստում ամփոփվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական 5-ամյա ծրագրի (2011-2016 թթ.) արդյունքները: Այս ծրագրով որակավորման բարձրացում է անցել 867 դասախոս՝ կուտակելով 27.667 կրեդիտ:

ԵՊՀ որոշ տարակարգերի աշխատաժամանակը պատշաճ հաշվառելու նպատակով միջոցառումներ են իրականացվել աշխատաժամանակի հաշվառման էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ:

Գնումների, պլանավորման և պահեստավորման նորաստեղծ վարչությունը 2016թ. ապահովել է գնումների առավել արդյունավետ և կանոնակարգված գործընթաց: Գնումներն իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերով՝ ապահովելով ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների մասնակցությունն ու ներգրավումը: Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողա-

կանությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով 2017 թ. եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու 2016 թ. կատարողականը ներկայացվել են ԵՊՀ գիտխորհրդի քննարկմանը:

### **Ուսանողների և ուսանողական կազմակերպությունների մասնակցություն**

ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումներում էապես կարևորվում է ուսանողների ակտիվ մասնակցությունը, որը ապահովվում է ինչպես ուսանողական կազմակերպությունների (Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն) համապատասխան գործունեությամբ, այնպես էլ ուսանողական հարցումների և այլ միջոցառումների իրականացմամբ:

Ուսանողական կազմակերպությունները պարբերաբար կազմակերպել են հանդիպումներ ռեկտորի և պրոռեկտորների հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են ուսանողներին հուզող մի շարք խնդիրներ: Կազմակերպվել են ուսանողների ներհամալսարանական մասնակցությունը խթանող դասընթացներ:

ԵՊՀ հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված են նաև ներհամալսարանական տարբեր գործընթացների մշտադիտարկումը և կոռուպցիոն ռիսկերին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսանողների հետ հետադարձ կապի ապահովումը: Ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (ուսուցմանն առնչվող տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատում), ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ: Տեղի են ունեցել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումներ ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների հարցաթերթի տեղեկատվական հատվածը պարունակել է կոռուպցիոն դրսևորումներին վերաբերող 2 հարց.

- Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք):

- Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով:

Հարցաթերթի տեղեկատվական հատվածի արդյունքներն ամփոփվել և տրամադրվել են ֆակուլտետներին՝ ամփոփներում քննարկելու համար: (Հավելվածի թիվ 1 ներդիրում ներկայացված են 2015/2016 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքները): Առկա ուսուցման համակարգում 2015/2016 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողների 1.6 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին (նախորդ տարի այս ցուցանիշը կազմել է 1.8 %), իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին դրական է պատասխանել 2.4 %-ը (նախորդ տարի այս ցուցանիշը կազմել է 2.6 %): 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողներից վերոհիշյալ հարցերին դրական են պատասխանել համապատասխանաբար 1.7 %-ը և 2.4 %-ը (նախկինում՝ 2.2 % և 2.8 %՝ համապատասխանաբար):

Հարկ է նշել, որ ինչպես նախկինում, այնպես էլ 2015/2016 ուստարվա հարցումների արդյունքով վերոհիշյալ ցուցանիշները բակալավրիատի և մագիստրատուրայի համակարգերում տարբերվում են: Այսպիսով, 2015/2016 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած մագիստրատուրայի ուսանողների շրջանում վերոհիշյալ հարցերից յուրաքանչյուրին դրական է պատասխանել հարցվածների 1.0 %-ը: Եթե համեմատենք նախորդ տարվա ցուցանիշների հետ, ապա պետք է փաստենք, որ նկատվում է որոշ դրական դինամիկա (2014/2015 ուստարվա ցուցանիշը կազմել է 1.5 % և 1.3 %): Միաժամանակ հարկ է նշել, որ բակալավրիատում վերոհիշյալ ցուցանիշները հավասարապես չեն բաշխված կուրսերի միջև, և ցուցանիշներն աճում են ըստ կուրսերի աճման:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներն ընդգրկում են ողջ ուսումնառության ընթացքը և արտացոլում ցուցանիշների գրեթե նույն պատկերը (Հավելվածի թիվ 2 ներդիրում ներկայացված են 2015/2016 ուստարվա շրջանավարտների հարցումների արդյունքները): Կոռուպցիոն երևույթների վերաբերյալ շրջանավարտների հարցման թերթիկում, ի լրումն վերը նշված երկու հարցերի, առկա է նաև հարց՝ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատա-



կան կամ ստուգարք ստանալու մասին (Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)):

Դրամի դիմաց գնահատական ստանալու հարցին դրական են պատասխանել հարցմանը մասնակցած բակալավրիատի շրջանավարտների շուրջ 1.9 %-ը (նախորդ ուստարում՝ 2.9 %) և մագիստրատուրայի՝ 1.1 %-ը (նախորդ ուստարվա համեմատ փոփոխություն գրեթե չկա): Բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին դրական են պատասխանել՝ բակալավրիատի շրջանավարտների 3.4 %-ը (նախորդ ուստարում՝ 3.2 %) և մագիստրատուրայի՝ 2.0 %-ը (նախորդ ուստարում՝ 1.6 %), իսկ հարկադրված մասնավոր պարապմունքների համար վճարելու հարցին՝ բակալավրիատի շրջանավարտների 2.8 %-ը (նախորդ ուստարում՝ 4.3 %) և մագիստրատուրայի՝ 1,6 %-ը (նախորդ ուստարում՝ 1.3 %):

Ուսանողական հարցումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անցած ուստարում ստեղծվել է ուսանողական հարցումների իրականացման առցանց (ինտերնետային) գործիք: Այն 2015/2016 ուստարում հաջողությամբ փորձարկվել է հեռակա ուսուցման համակարգում, և կատարվել են աշխատանքներ հարցումների իրականացման առցանց (ինտերնետային) գործիքը առկա համակարգում օգտագործելու նպատակով:

### **Դասավանդում և ուսումնասիրություններ**

2015-2018 թթ. ծրագրով նախատեսված են միջոցառումներ, որոնք նախկին տարիների ծրագրերում նախատեսված չեն եղել: Դրանցից են՝ կրթական (այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման) ծրագրերում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացների մշակումն ու ներդրումը, շահերի բախման դրսևորումների բացահայտման և չեզոքացման ուղեցույցի մշակումը, կոռուպցիայի երևույթի և դրա կանխարգելման խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը: Այս աշխատանքների իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ և նախատեսում է միջդիսցիպլինար համագործակցություն: Իրավագիտության ֆակուլտետում իրականացվել են «կոռուպցիա» երևույթի և դրա կանխարգելմանն ուղղված ուսումնասիրություններ, կրթական ծրագրերում «Կրիմինոլոգիա» և «Քրեական իրավունք» դասընթացների շրջանակում ներդրվել են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված թեմա-

տիկ քննարկումներ: Հաշվետու ժամանակաշրջանում այս փորձն ուսումնասիրվել է, և աշխատանքներ են տարվում այլ ֆակուլտետներում տարբեր կրթական ծրագրերի շրջանակում ներմուծելու կոռուպցիայի կանխարգելման խնդիրներին առնչվող թեմաներ:

### **Համագործակցություն տարբեր ծրագրերի շրջանակում**

ԵՊՀ ներկայացուցիչը ներգրավված է եղել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համագործակցությամբ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում 2016 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Նիդերլանդներ կատարված ճանաչողական այցի պատվիրակության կազմում: Այցի ընթացքում պատվիրակության 12 անդամները՝ ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Կարինե Հարությունյանի գլխավորությամբ, պետական և հանրային տարբեր կոռուպցիայի ծանոթացման այդ երկրի բուհական համակարգի առանձնահատկություններին, կոռուպցիայի դեմ պայքարի ու ակադեմիական բարեվարքության խթանման աշխատանքներին:

ԵՊՀ պատվիրակությունը մասնակցել է 2016 թ. դեկտեմբերի 12-13-ը Ծաղկաձորում կայացած՝ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համագործակցությամբ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի ամփոփիչ կոնֆերանսին:

**Հավելվածի ներդիր 1.**

**Երևանի պետական համալսարան  
Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ**

**2015/2016 ուստարի, 1-ին կիսամյակ**

**Առկա ուսուցում**

**Հարցմանը մասնակցել է 8292 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	129	7926	8055
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	191	7730	7921

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 7258 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	119	6936	7055
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	181	6748	6929

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 1034 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	10	990	1000
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	10	982	992

**Բակալավրիատ**

**1-ին կուրս**

**Հարցմանը մասնակցել է 2079 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	17	2011	2028
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	39	1952	1991

## 2-րդ կուրս

### Հարցմանը մասնակցել է 1751 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	30	1663	1693
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	41	1613	1654

## 3-րդ կուրս

### Հարցմանը մասնակցել է 1682 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	33	1606	1639
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	58	1553	1611

## 4-րդ կուրս

### Հարցմանը մասնակցել է 1746 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	39	1956	1695
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	43	1630	1673

## Մագիստրատուրա

## 1-ին կուրս

### Հարցմանը մասնակցել է 371 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	2	359	361
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	2	353	355

## 2-րդ կուրս

### Հարցմանը մասնակցել է 663 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	8	631	639
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	8	629	637

**2015/2016 ուստարի, 2-րդ կիսամյակ**

**Հարցմանը մասնակցել է 6740 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	114	6453	6567
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	162	6351	6513

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 6401 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	109	6125	6234
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	158	6028	6186

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 339 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	5	328	333
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	4	323	327

**Բակալավրիատ**

**1-ին կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1731 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	27	1655	1682
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	44	1620	1664

**2-րդ կուրս**

**Հարցմանը մասնակցել է 1668 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	28	1587	1615
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	38	1572	1610

### 3-րդ կուրս

#### Հարցմանը մասնակցել է 1493 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	20	1439	1459
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	34	1414	1448

### 4-րդ կուրս

#### Հարցմանը մասնակցել է 1509 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	34	1444	1478
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	42	1422	1464

## Մագիստրատուրա

### 1-ին կուրս

#### Հարցմանը մասնակցել է 339 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	5	328	333
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	4	323	327

**Հավելվածի ներդիր 2.**

**Երևանի պետական համալսարան  
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ  
շրջանավարտների հարցման արդյունքներ**

**2016 թ.**

**Բակալավրիատ**

**Հարցմանը մասնակցել է 2413 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	43	2280	2323
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	80	2246	2326
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	66	2256	2322

**Մագիստրատուրա**

**Հարցմանը մասնակցել է 923 ուսանող**

<b>Հարց</b>	<b>Այո</b>	<b>Ոչ</b>	<b>Գումարային</b>
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	10	894	904
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	18	886	904
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	15	888	903